2 Kreuzer

№ 28 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 8 1897 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 8 № 28

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
„ՄՇԱԿ“
(25-րդ ՏԱՐԻ)
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՅ 1897 ԹՒԱԿԱՆԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Տարեկան գինը՝ 10 րուբլի, կէս տարվանը՝ 6 րուբլի
Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction «MSCHAK».

Գալուստ Գալստեանց, խորին ցաւով յայտնելով իր քրոջ, Հայուհեաց ընկերութեան կար ու ձևի դպրոցի նախկին աշակերտուհի՝

ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Մեղրի գիւղում, 19 տարեկան հասակում, խնդրում է բարեկամներին և ծանօթներին յարգել իրանց ներկայութեամբ հանգուցեալի հոգեհանգիստը, որ տեղի կունենայ մարտի 9-ին, կիրակի օր, Քամոյեանց եկեղեցում, պատարագից յետոյ, առաւօտեան 11½ ժամին: 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սալմաստի հայ գաղթականների մասին. Էլի նոր փաստեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դարձեալ Անդրկովկասեան աւազակութիւնների մասին. Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակ Բաթումից. Նամակ Պետերբուրգից. Նամակ Մոսկվայից. Նամակ Բագուից. Նամակ Ալէքսանդրօպօլից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Անգլիայից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Գրողի օրագիրը. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արևելք.

ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս անգամ մեր խօսքը ուղղում ենք Սալմաստում գտնվող թէ տեղացի և թէ եկւոր այն Հայերին, որոնք կարող են գաղթականների օգնելու գործում նախաձեռնող լինել: Մեր կարծիքով, դրանց պարտականութիւնն է, եթէ միայն ուզում են գաղթականներին ազատել քաղցից, տարափոխիկ հիւանդութիւնների կոտորածից, առանց րոպէ կորցնելու հոգալ տեղական մասնաժողովի կազմակերպութեան մասին: Մինչև գոյութիւն չունենայ մի այդպիսի մասնաժողով, չէ կարելի ոչ Կովկասից և ոչ ուրիշ տեղերից դրամական օգնութիւն սպասել, այն պարզ պատճառով, որ ոչ ոք չը գիտէ, թէ ում և որտեղ պէտք է փող ուղարկել՝ Սալմաստում ապաստանած գաղթականներին խնամելու համար:

Սալմաստում գտնվող ինտելիգենտ, ձեռնհաս անձինք մի կողմից մասնաժողով հիմնելու պատրաստութիւններ տեսնելով, միւս կողմից կարող են յարաբերութեան մէջ մտնել Ատրպատականի նոր առաջնորդի հետ՝ նրա պաշտօնական աջակցութիւնը ստանալու համար, այլ և կարող են դիմել Թաւրիզի, Թեհրանի և Պարսկաստանի միւս քաղաքների Հայերին, դրամական նպաստներ ստանալու համար: Նոյն դիմումը պէտք է անել և կաթօլիկ ու բողոքական միսիոնարներին:

Գաղթականներին օգնող մասնաժողով հիմնելը Սալմաստում բարդ, դժուար և առանձին ոյժեր պահանջող գործ չէ. Նրան իրականացնելու համար երկու բան է միայն պէտք՝ նախաձեռնութեան ոգի և եռանդ, քանի որ հասարակական տրամադրութիւնը ամեն տեղ արդէն պատրաստ է օգնութեան ձեռք մեկնելու այնտեղ ապաստանած գաղթականներին:

ԷԼԻ ՆՈՐ ՓԱՍՏԵՐ

Երեք օր առաջ Թիֆլիսում տեղի ունեցաւ մի աղետալի դէպք: Մի ջահել կին, որին ամուսնացրել էին չը սիրած տղամարդի հետ, հակառակ իր ցանկութեան, անկարող լինելով ազատվել իրան կաշկանդող շղթաներից, վճռեց վերջ դնել իր կեանքին և ընդունելով կարբօլեան թթուատ, մեռաւ սոսկալի տանջանքների մէջ: Նրա հետ միասին թունաւորվեց և տղամարդի քոյրը, մի ջահել աղջիկ, որը, նոյնպէս չը կարողանալով դիմանալ իր հարսի դէմ գործվող անարդարութեանը, զոհեց իրան: Երկու զոհերն էլ պատկանում են մի վրացի ընտանիքին:

Մեր հասարակական բարքերի տարեգրութեան մէջ այդպիսի սոսկալի դէպքեր շատ են պատահում, և դրանք միշտ անցնում են աննկատելի և անհետևանք: Եւ սակայն նրանք, իբրև կենդանի և յուսահատ բողոքներ մի զարհուրելի անարդարութեան դէմ, որ լափում, մաշում է մեր հասարակական կեանքը, և հազարաւոր խոցեր է բաց անում ընտանեկան կեանքի մէջ, պէտք է իրանց վրա դարձնեն հասարակութեան, բարոյագէտների և օրէնսգէտների լուրջ ուշադրութիւնը: Կեանքը առաջ է գնում, կերպարանափոխվում է, հայեացքները, գաղափարները արմատականապէս յեղաշրջվում են, իսկ այդ կեանքը ղեկավարող օրէնքները և կարգերը, որոնք գործում են դարերից ի վեր, մնում են անշարժ և անփոփոխ: Ամբողջ տասնեւինն դար քրիստոնէական եկեղեցին քարոզում է, որ ամուսնութիւնը պէտք է արդիւնք լինի երկու անհատների փոխադարձ սիրոյ և համակրութեան, փոխադարձ համաձայնութեան, իսկ այդ եկեղեցու ներկայացուցիչները շարունակում են շղթայել անխզելի կապերով երկու միմեանց չը սիրող, անծանօթ և իրանց գաղափարներով ու աշխարհայեացքներով օտար էակներ, նոյն իսկ միմեանց ատող կին և մարդ: Գիտութիւնը, վերջապէս փորձը խրատում են ծնողներին, թէ չը պէտք է բռնաբարել զաւակների կամքը, այլ պէտք է լիակատար ազատութիւն տալ նրանց՝ կազմելու նոր ընտանիք սիրոյ, համակրութեան, բարոյական միութեան հիմունքների վրա, իսկ ծնողները շարունակում են զոհել զաւակների, ապագայ ընտանիքների երջանկութիւնը՝ իրանց շահասիրական և ուրիշ անմիտ նպատակներին: Եւ այնպիսի սոսկալի դէպքեր, ինչպէս ներկայ դէպքն է, չեն ցնցում, չեն յուզում, չեն խրատում ծնողներին և չեն ստիպում նրանց ձեռք քաշել իրանց աւանդական կոպտաբեր վարմունքից:

Ամբողջ քսանհինգ տարի է „Մշակը“ քարոզում է, թէ անհրաժեշտ է, նոյն իսկ քրիստոնէութիւնից և Աւետարանից բղխած պահանջ է՝ վերաքննութեան ենթարկել և բարեփոխել ամուսնական եկեղեցական օրէնքները (լինի դա հայոց թէ վրաց), համաձայն ժամանակակից քաղաքակրթութեան և բարոյագիտութեան պահանջներին, բայց եկեղեցին շարունակում է ղեկավարվել այն կանօններով, որոնցով ղեկավարվում էր դեռ հին դարերում, բոլորովին ուրիշ հասկացողութիւնների շրջանում: Եւ այդ աններելի անհոգութեան, անտարբերութեան հետևանքները լինում են այն, որ անբաղդացած էակը, ոչ մի ելք չը գտնելով իր թշուառ վիճակից դուրս գալու, ոչ մի միջոց չունենալով խորտակել այն շղթաները, որոնք դատապարտում են նրան մշտական ստրկութեան, հոգեկան տանջանքների, դիմում է մի այնպիսի միջոցի, որ թէ եկեղեցու, թէ բարոյագիտութեան տեսակէտից ամենամեծ յանցանք է համարվում—անձնասպանութիւն: Եւ միթէ՞ քրիստոնէական եկեղեցին, հաստատելով ամուսնութեան խորհուրդը, իբրև երկու ազատ և անկախ էակների ազատ միութեան ու համաձայնութեան դաշն, երբ և իցէ նպատակ է ունեցել մատնել նրանց յուսահատութեան և դրդել՝ գործել յանցանքներից ամենածանրը — ինքնասպանութիւնը: Երբէք. եկեղեցին ոչ մի ժամանակ բռնութիւն չը պէտք է պաշտպանի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼՔ*

I

Եւրոպան Արևելքի մասին մինչ ցարդ լսած է, ինչ որ բանականութիւնը, գիտութիւնը և քաղաքագիտութիւնը կարողանում էին ասել և ներգործել:

Ես կը համարձակվիմ մի խօսք աւելացնելու, և որպէս զի սա խօսքը դիւրամատչելի լինի, ուզում եմ իրաց վիճակը ի հանդէս ածել, բայց ոչ այնպէս, ինչպէս Եւրոպան նրան տեսնում է իր քաղաքագիտական դաշնագրութիւնների մէջից, այլ այնպէս, ինչպէս մենք՝ արևելցիքս տեսնում ենք բուն իսկ մեր կացութեան ճշմարտութիւնների մէջտեղից:

Երկար տարիներից ի վեր Եւրոպան մեզ լսել է տալիս երկու հաւասար ձայներ: Մի կողմից դիւանատները ամենայն րոպէ մեզ յիշեցնում են, որ թիւրքաց պետութեան գոյութիւնը եւրոպական մի պիտոյք է, և միւս կողմից մամուլը ամենայն օր կրկնում է մեզ, որ նոյն պետութեան գոյութիւնը միմիայն բարենորոգումով կարելի է:

Այդ եւրոպական պիտոյքը հասկանում ենք մինչ մի աստիճան: Բայց բարենորոգումը ո՞րն է, ո՞րտեղից պէտք է գայ:

Մի բան միայն գիտենք, այն է, որ մի դարից ի վեր դիպլոմատիա, զէնք, գանձեր, խրատներ, համոզիչ յորդորումներ, միով բանիւ Եւրոպայի կողմանէ բոլոր երևակայելի միջոցներ ի գործ դրուած և զոհուած են սոյն արևելեան բարենորոգումների գործին:

Ի՞նչ է եղած հետևանքը:

Մեր երկիրների համար աւերակների մի կոյտ, մեր ժողովուրդների համար էլ արտասունքի անսպառելի մի աղբիւր:

Ի՞նչպէս ուրեմն պէտք է մեկնել այս եւրոպական իմաստութեան և կարողութեան արտասովոր անանկութիւնը: Մեր պատասխանը կարճ կը լինի:

Պետութիւնները չը հասկացան, թէ ինչ է իսլամը:

Եւրոպան, մանաւանդ դիպլոմատիական Եւրոպան չարաչար սխալվում է այս խորհրդաւոր կրօնական վարդապետութեան բնութեան և էութեան մասին, մի վարդապետութիւն, որ հազար տարիէ ի վեր երկու հարիւր միլիոն հոգիներ վարում է և որոյ անքակտելի ոյժը տակաւին քաղաքակրթեալ աշխարհի ջանքերին յաղթարեզ է կարդում:

Անկարելի է այստեղ լուծանել մի այսպիսի լայնածաւալ աստուածպետական կառավարութեան եղանակը: Կարևոր կէտը՝ այսօր բոլոր իսլամը տիրապետող սկզբունքը որոշակի սահմանելու մէջն է:

Այս սկզբունքը՝ ահաւասիկ.

Քրիստոնեայ Եւրոպան մի թշնամի է:

Ամեն քրիստոնեայ միջամտութիւն իսլամի գործերում՝ մի սրբապղծութիւն, մի ոճիր է:

Իսլամ ժողովուրդները, սոյն անքակտելի սկզբունքի ազդեցութեան ներքև կարծում են, որ իրանց առաջին պարտքն է ատել, յետ մղել, մինչ ցմահ մաքառել Եւրոպայից եկող ամեն բարենորոգումների դէմ:

Կարելի է յաղթել, նուաճել, բնաջինջ անել, ցրուել մի իսլամ ժողովուրդ, բայց երբէք չի ընդունիր քրիստոնեայ Եւրոպայի որ և է մի փոփոխումը:

Ինչի համար:

Որովհետև մի մուսլիմի համար բարենորոգումը միայն մի օրինաւոր ծագում կարող է ունենալ, այն է իսլամը:

Թէկուզ սա անտեղի լինի կամ լօգիքական, ինչ կուզէ թող լինի, սա կարծիքը մի եղելութիւն է, և մի անվերածելի եղելութիւն է:

Դժբախտութիւնը նրանումն է, որ դիպլոմատիան սոյն սկզբունքի գոյութիւնը չէ իմանում, և բացի սրանից մի բանում էլ սխալվում է, և սա էլ մի աններելի յանցանք է, որով հրատարակում, հռչակում է իբր թէ Մահմեդի կրօնքը յառաջադիմութեան թշնամի է, ուստի Եւրոպան պէտք է յանձն առնու պէտք եղած բարենորոգումները իսլամին ընդունել տալու: Կրօնքի տեսակէտից սա մի կեղծ քաղաքագիտութիւն է, արևելեան հարցի բոլոր տարրերին դէմ է:

Նախ և առաջ պէտք է գիտնալ, որ իսլամը միայն Մահմեդի կրօնը չէ: Կուրանի բուն բնագրի համաձայն՝ Ադամ, Նոյ, Աբրահամ, Մովսէս և Յիսուս ճշմարիտ մուսլիմներ էին: Իսլամը (Աստուծոյ կամացը հպատակութիւն) Մահմեդի թւականից բնաւ չէ սկսած: Ըստ իսլամական աստուածաբանութեան մի յաւիտենական ճշմարտութիւն է, որ հարիւր քսան և չորս հազար մարգարէներ եկել են բոլոր ժողովրդոց և համայն աշխարհի հռչակելու համար:

Երկրորդ, սոյն տիեզերական վարդապետութիւնը այնպէս, ինչպէս մուսլիմական ուղղափառութիւնը հասկանում է, չէ կարելի նկատել իբրև յառաջդիմութեան թշնամի: Եւ յիրաւի,

---

* „La Revue de Paris“-ի փետրվար ամսաթերթում „L'Orient“ վերնագրով և Prince Malcum Khan ստորագրութեամբ այդ յօդուածն է հրատարակված: „Սա առաջին անգամն է, որ Արևելքը, կամ լաւ եւս՝ արևելեան հարցի ոգին ճշգիւ լուսապարզուած է,“ ասում է Եգիպտոսի պատամիտ ինտելլիգենցիան, որ հետևում է յօդուածագրի առողջ դատողութեան և զարմանալի խորատեսութեան վրա: Տեղական առաջնակարգ արաբ լրագիրք թարգմանեցին և հետզհետէ թարգմանում են: Որովհետև յօդուածը մի հայի ճարտար և ուշիմ գըչի ծնունդ է, ես էլ յարմար դատեցի թարգմանել և ուղարկել, յուսալով որ „Մշակի“ ընթերցողներն էլ կը հետաքրքրվեն:

Ծանօթ. Թարգմանչի

Գահիրէ
1897. փետրվար.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԵԱԼ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Մշակի» ընթերցողներն արդէն ծանօթ են «С.-Петербургскія Вѣдомости» լրագրի մէջ այդ վերնագրով տպված մի շարք յօդուածների բովանդակութեան հետ, որոնց նպատակն էր, փաստերի հիման վրա, ապացուցանել թէ որքան անմիտ, անարդար են Սուվօրինի և նրա արբանեակների յարձակումները ու ինսինուացիաները հայերի դէմ: Այժմ նոյն լրագրի փետրվարի 27-ի համարում տպված է մի նոր առաջնորդող յօդուած «Կովկասցի» ստորագրութեամբ և «Ինչի մէջ է կայանում Անդրկովկասում եղող աւազակութիւնների իսկական պատճառը» վերնագրով, որով հեղինակը, հիմնվելով դարձեալ անհերքելի փաստերի վրա, գրում է մի ուրիշ անմիտ և անարդար յարձակում, որ արել է հայերի դէմ ոմն Վերէշչագին, «Новости» լրագրի էջերում:

Այդ պարոնը այն միտքն է յայտնում, որ Անդրկովկասում և մասնաւորապէս Գանձակի նահանգում աւազակութիւնների աճման գլխաւոր պատճառը կաշառակերութիւնն է, իսկ կաշառակերութիւնը ծագած է այդտեղ այն պատճառով, որ գաւառապետների պաշտօնները վարում են «տեղացի խելօք, հարուստ, տաղանդաւոր, բայց միջոցների մէջ խտրութիւն չը դնող մի ազգութեան ներկայացուցիչները», այն է հայերը:

Յօդուածագիրը ցոյց է տալիս, պաշտօնական վիճակագրական տեղեկութիւնների հիման վրա, որ Բագուի, Երևանի և Գանձակի նահանգներում, որտեղ ամենից շատ տեղի են ունենում աւազակութիւնները, ոչ մի հատ հայ գաւառապետ չը կայ, այլ եղածները կամ ռուս են, կամ վրացի, կամ թուրք: Իսկ Թիֆլիսի և Քութայիսի նահանգների 16 գաւառներում, ինչպէս և Կարսի շրջանի 4 գաւառներում ընդամենը 2 հայ գաւառապետներ կան, այնպէս որ դուրս է գալիս, որ «աւազակային գաւառներում» մի հատ հայ գաւառապետ չը կայ, իսկ ամբողջ Անդրկովկասի 41 գաւառապետների մէջ միայն երկուսն են հայեր: Պարզ է ուրեմն, որ Վերէշչագինի կարծիքը միանգամայն անհիմն և անարդար է:

Հաստատելով այդ նշանաւոր փաստը, յօդուածագիրը անցնում է քննելու, թէ որոնք են աւազակութիւնների աճման գլխաւոր և բուն պատճառները: Ամեն մի փոքր ի շատէ անաչառ և անկողմնակալ անձ շատ հեշտութեամբ կարող է իմանալ այդ պատճառները, եթէ նա կուրացած չէ չար նախանձով և լցված չէ ինսինուացիաներ անելու ցանկութեամբ: Այդ պատճառները հետևեալներն են. 1) Ամենաշատ աւազակութիւնները լինում են Բագուի նահանգի բոլոր գաւառներում, Գանձակի նահանգի՝ Ջիբրայիլ, Զանգեզուր և Շուշի գաւառներում և Երևանի նահանգի՝ Նախիջևանի և Սուրմալուի գաւառներում: Այդ գաւառները սահմանակից են Պարսկաստանի և Թիւրքիայի հետ, երկու անկուլտուրական երկրների հետ, որտեղ աւազակութիւնը չէ հալածվում և ուր մեր աւազակները, փախչելով գտնում են ապաստան և հիւրընկալութիւն: 2) Այդ գաւառների մուսուլման ազգաբնակութեան աշխարհայեացքը. քրիստոնեայ ազգաբնակութիւնը տեսնում է աւազակութեան մէջ մի յանցանք, աւազակի մէջ մի անարգ, արտաքսված մարդ, իսկ մահմեդական ժողովուրդը, ընդհակառակը, աւազակութիւնը համարում է քաջութիւն, հերոսութիւն, տղամարդութիւն և Նաբիների ու Քիարիմների փառքը հարիւրաւոր ջահիլ թուրքերի համար մի գրաւիչ պերսպէկտիվա է համարվում:

Ահա այդ աշխարհահայեացքի մէջ է չարիքի արմատը. նրա դէմ պէտք է կռուել և ոչ երևակայած, անմիտ ու անարդար մեղադրանքներ բարդել մի խաղաղ ու կուլտուրական ժողովրդի վրա:

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Փետրվարի 25-ին

1888 թւին կնքեց մահկանացուն երջանկայիշատակ բարեգործ Նիկողայոս Աճեմեանը, որը իր անպին կայքը թողեց ազգին: Կտակակատարները պարտական էին այդ բոլոր կայքը անձեռնմխելի գումար դարձնել. Նրա կինը մինչև մահ տոկոսներից $^3/_4$ մասը պիտի ստանայ, իսկ $^1/_4$ մասը պիտի միանայ մայր գումարի հետ և Աճեմեանի կնոջ մահից յետոյ, պիտի իրագործվի այն սուրբ նպատակը, որ երազել էր բարեգործը, այսինքն Նոր-Նախիջևանի մէջ պէտք է բացվի «Աճեմեան հայոց տեխնիկական ուսումնարան»: Ուսումնարանը պիտի պահվի անձեռնմխելի գումարի տոկոսներով և «ունի նպատակ տալ հայ չքաւորների զաւակներին, գլխաւորապէս Նոր-Նախիջևանցիներին՝ բարոյական դաստիարակութիւն, մտաւոր կրթութիւն և տեխնիկական գիտութիւն»: Առարկաները՝ հայոց լեզու և կրօն պարտաւորեցուցիչ են. Մնացեալ առարկաները, բացի ռուսաց լեզուից և ռուսաց պատմութիւնից և աշխարհագրութիւնից, կարող են լինել հայերէն: Ահա կտակի իմաստը:

Կտակակատարները նշանակված են պ.պ. Ս. Խ. Ցարութիւնեան, Գ. Խ. Քեչեճեան և այրին՝ Ի. Մ. Աճեմեան: Վեց տարի շարունակ կտակակատարները ոչ մի հաշիւ չը ներկայացրին մեր Դումային և ինչ յանդգնութիւն կը լինէր պահանջել հաշիւ պ. Ցարութիւնեանից. դա ուժեղ անձն է, հրատարակում է այստեղի միակ ռուս հայատեաց լրագիրը, Դումայի քարտուղար և զանազան յանձնաժողովների անդամ է: 1894-ին մենք յանձն առանք այդ ծանր պարտքը և յարուցինք Աճեմեան կտակի խնդիրը: Դուման միաձայն որոշեց պահանջել հաշիւ: Կտակակատարները մերժեցին տալ այդ հաշիւը: Պէտք էր դատի դիմել, բայց խաթր զօրեղ է և ահա քաղաքագլուխ Մինաս Պալապանեանը յայտնում է, որ քաղաքը փող չունի փաստաբան վարձելու: Մենք յօժարեցանք այդ սուրբ գործը վարել առանց վարձատրութեան, մեր հաշւով: Դատարանը վճռեց այդ դատը քաղաքի օգտին և վերջապէս 1895-ի վերջերին կտակակատարները ներկայացրին հաշիւ: Դուման որոշում է յանձնել հաշիւը մի յանձնաժողովին՝ քննելու համար: Այս օրերս յանձնաժողովը ներկայացրեց իր քննութիւնը: Դուրս եկաւ պանամա, այո, կատարեալ պանամա:

Նախ՝ հանգուցեալ Աճեմեանը, որը մի լաւ վաճառական էր, կարգադրել է, որ մահվանից յետոյ կտակակատարները ամեն ինչ պարզեն, հրապարակ հանեն, որպէս զի ակներև լինի բոլոր կայքի արժէքը: Կտակակատարները ընդհակառակը ամեն ջանք են թափել, որպէս զի չիմացվի կայքի իսկական արժէքը և առանց դատաստանական իշխանութեան (безъ судебнаго пристава), առանց քաղաքի ներկայացուցչի, աճուրդներ են հրաւիրել գնահատութեան համար՝ և 100 հազարի գինին, կահկարասիքը՝— արժեցրել են 54 հազար րուբլի: Երկրորդ՝ կտակակատարները վեց ամիս շարունակել են առուտուրը և գրանից ստացած դրամը, մօտաւորապէս 10 հազար րուբլի, թագցրել են և չեն ցոյց տալի հաշւի մէջ: Երրորդ՝ կտակակատարները շարունակ տարիներով օգտվել են հանգուցեալի փողեր — 20 հազար րուբլի, և առանց տոկոսի մինչև այժմ պահում են իրանց գրպաններում 17,000 րուբլի: Չորրորդ՝ կտակակատարները չեն ներկայացրել յանձնաժողովին ոչ մի վաւերաթուղթ՝ արած ծախսերի համար, որոնք հասնում են մօտաւորապէս 100 հազարի: Հինգերորդ՝ հակառակ կտակի իմաստին՝ երկու կտակակատարները՝ պ.պ. Ցարութիւնեան և Քեչեճեան վաճառել են վերոյիշեալ կայքը երրորդ կտակակատարին, տ. Աճեմեանին—46 հազարով: 100 հազարից կայքը՝ 46 հազարի... խեղճ «Աճեմեան հայոց տեխնիկական ուսումնարան»... Վեցերորդ՝ կտակակատարները անձեռնմխելի գումարից 42 հազար ծախսել են և շինել են մի տուն Ռոստովում: Լսած էք, որ անձեռնմխելի գումարը ծախսվի:

Ահա յանձնաժողովի զեկուցման կարևոր կէտերը: Դուման որոշեց՝ պահանջել բացատրութիւն կտակակատարներից, և այդ բացատրութիւնը ու յանձնաժողովի զեկուցումը տպել և բաժանել ձայնաւորներին: Ի՞նչ կասէր հանգուցեալ Աճեմեանը, եթէ յանկարծ բանար աչքերը և տեսնէր, որ կտակակատարները, որոնց նա ամբողջ հոգւով հաւատացել է, անբարեխիղճ կտակակատարներ են: Անուս Աճեմեանը ցանկանում է ուսումնարան հիմնել և ընտրում է կտակակատար ուսում աւարտած պ. Ցարութիւնեանին, բայց պ. Ցարութիւնեանը այնպէս է գործը տանում, որ փոխանակ հայոց Աճեմեան տեխնիկական ուսումնարանի՝ դուրս է գալիս հայոց Աճեմեան պանամա...

Գր. Չալխուշեան

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Մարտի 3-ին

Յունաց նորակոչ զինւորները, որոնց մասին հաղորդել էի անցեալ նամակով, արդէն թէ Բաթումի շրջակայքից և թէ ծովեզրեայ միւս քաղաքներից ժողովվում են այստեղ և մաս-մաս ճանապարհ ընկնում դէպի հայրենիք: Այսօր ֆրանսիական «Մեսաժըրի Մարիտիմ» ընկերութեան «Սիդօնիա» շոգենաւով ճանապարհ ընկան մօտ 78 հոգի: Տեսարանը թէ սրտաշարժ և թէ խրախուսական էր, իսկ շատերի համար էլ նախանձելի: Օդը պարզ էր և տաք: Կէսօրվայ ժամը մօտ 12-ն էր, երբ «Սիդօնիա» շոգենաւից լսվող «ուրրայի» գոչիւնը սկսեց մեծ բազմութիւն գրաւել դէպի ծովափը: Նորակոչ զինւորները արդէն բարձրացել էին շոգենաւի վրա և յունաց պատերազմական դրօշակը պարզած՝ անսահման ոգևորութեամբ զրնգեցնում էին օդը իրանց «ուրրա»-ներով: Նրանց ձայնակցում էին իրանց ազգականները և ծանօթները, որոնք մեծ բազմութեամբ նաւակներով շրջապատել էին շոգենաւը: Շոգենաւը նոյնպէս լցվել էր մարդկանցով՝ գլխաւորապէս յոյներով: Դրանք եկել էին բարի ճանապարհ և աջողութիւն մաղթելու հայրենասէր երիտասարդներին, որոնք ուրախ և զուարթ սրտով դիմում էին դէպի հայրենիք՝ նրա պատւի համար վրէժխնդիր լինելու: Շոգենաւ էր եկել նոյնպէս և այստեղի ոստիկնապետ Եգօրով, որին երիտասարդ զինւորները բարձրացրին իրանց ձեռքերի վրա և երկար «ուրրա»-ներով պատուեցին: Ի պատիւ հայրենասէր զինւորների, դրօշակ բարձրացրին և բարձրաձայն «ուրրա»-ներով ձայնակցեցին իտալական շոգենաւի բոլոր ծառայողները: Մէջ ընդ մէջ լսվում էր. «Կեցցէ Յունաստան, կեցցէ Ֆրանսիա, կեցցէ Իտալիա»: Բարի ճանապարհ մաղթելու համար՝ շոգենաւը գնալու ժամանակ միւս բոլոր նաւերն էլ բարձրացրին իրանց դրօշակները: Ժամը 2 էր, երբ շոգենաւը շարժվեց և սկսեց դանդաղ կերպով առաջ գնալ: Նրան հետևում էին նաւակները, իսկ երկու կողմից լսվող «ուրրա»-ները երկար ժամանակ չէին դադարում:

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Մարտի 1-ին

Փետրվարի 28-ին տեղի ունեցաւ «St. Petersburger Singakademie» խմբական երգեցողութեան սիրողների կօնցէրտը, գերմանական-նոր աղանդական եկեղեցում, պ. Մօսսինի ղեկավարութեամբ և աջակցութեամբ Նալբանդեանի և Շահլամեանի: Կօնցէրտը յօգուտ դաղթական

երբ մարդ ուսումնասիրէ իսլամական կրօնքը, ոչ միայն Կուրանում, այլ և մանաւանդ Հադիսների ովկիանոսում, որոնք իսլամի աւետարաններն են, ամեն քայլափոխում կը տեսնուի, որ ոչ մի կրօնք չունի մի բարոյական սկզբունք կամ յառաջադիմութեան մի սերմ, որ առատօրէն տարածված չը լինի իսլամի բոլոր կրօնական գրքերում: Ոչ մի կրօնական վարդապետութիւն աւելի լաւ չէ հռչակած քաղաքացիական հաւասարութիւնը, ընկերական գթութիւնը, անհատական իրաւունքները, ժողովրդի ձայնի գերիշխանութիւնը և ինչ որ ամենից աւելի աչքի զարնողն է, իշխանութեան ոյժերի զեղծումների դէմ գնելու պարտականութիւնը:

Եթէ այդպէս է, պէտք է ասեն, ինչպէս ուրեմն բացատրել սա անդարմանելի անկումը, որ նկատվում է այսքան երկար ժամանակէ ի վեր բոլոր մօսլիմական ցեղերում:

Քիչ բացատրված և կարելի է բուն եւրօպական գաղափարներով անբացատրելի կարծված այս այլանդակ երևոյթի պատճառները ամբողջապէս անծանօթ են իսլամական վարդապետութեան: Ցաւը բոլորովին ուրիշ մի ծագում ունի:

Արևելքում մենք միայն մի ցաւ ենք ճանաչում, և այս միակ ցաւը այն սոսկալի պատմական աղէտն է, զոր կոչում ենք Ասիայի բռնակալութիւնը:

Այս ասիական բռնակալութեան աղէտը ոչ մի բանով չէ նմանում այն աղէտներին, որ Եւրօպան կրած ունի իր պատմութեան զանազան ժամանակներում: Եւրօպական ոգին չէ կարող ըմբռնել ոչ սոյն բռնակալութեան բնութիւնը և ոչ էլ ծանրութիւնը, որոնք մեր ասիական հոգիները ճնշում են, որովհետև ոչ մի ժամանակում Եւրօպան անկախութեան և մարդոց իրաւունքի սկզբունքները ամբողջապէս կորուսած չունի: Մեր վայրենի բռնակալութիւնը, առանց գթութեան և խղճի, երբէք չը ճանաչեց ոչ օրէնք, ոչ իրաւունք, և ոչ մի բարոյական սահման: Այս կոյր ամենակալութիւնն է, որ մարդկութեան բոլոր իրաւունքները ոտնակոխ անելով, բոլոր լուսաւորութիւնները խեղդելով, չորացուց Արևելքում յառաջադիմութեան բոլոր սերմերը: Մեր ժողովուրդների բոլոր անբաղդութիւնները, մեր պատմութեան բոլոր սոսկումները գալիս են այդ սկզբնական ցաւից. հազար ու մէկ աշխարհագրական, կրօնական, բարոյական ու ֆիզիկական պատճառներ էլ ոչ սակաւ նպաստեցին այս ցաւը Ասիայի բոլոր երկիրների մէջ մշտնջենաւորելու:

Իսլամութիւնը Արևելքում իրաւունքի առաջին և ամենազօրեղ բողոքը հանդիսացած է ասիական սոյն կատաղի վարչական եղանակի դէմ: Այս շարժումը, ինչպէս ամենքիս յայտնի է, նշանաւոր եղած է: Այս նոր օրէնքը, ժողովրդի գերիշխանութեամբը զինեալ, իր յաղթական ընթացքը արշաւեց այնքան ատեն, որքան կարողացաւ իր ռամկապետական խարիսխների վրա հաստատուն մնալ: Բայց որովհետև ներքին կարգադրութեանց մի քանի պատճառների ազդաւ, որոնք մեզ յայտնի են և քիչ են ծանօթ Եւրօպային, իսլամը ժամանակ չունեցաւ իր կազմակերպական գործը լրացնելու, հետևաբար իրան անկարելի եղաւ բռնաւորական վիշապին յարձակումներին դիմադրելու, այն հրէշին, զոր անյաղթելի էր արել Ասիայի մշտնջենաւոր ստրկութիւնը:

Հազար ու մէկ խորհրդաւոր, կրօնական, զինւորական ձևերի ներքև հետզհետէ վերանորոգեալ կռիւներից յետոյ,—որոնց ուսումնասիրութիւնը պահանջում է տակաւին պատմութիւնը,—նոր վարդապետութիւնը ընկճվեց, բայց իր սոսկալի թշնամու ձեռքից չը կարողացաւ ազատվել: Յաղթող բռնակալութիւնը իսլամին նուաճեց, նրա սկզբունքները բռնաբարեց, ոգին խեղաթիւրեց: Զինւորական աստուածպետութեան բոլոր սեփականութիւններովը սպառազինվեց, որպէս զի կարողանայ ամեն տեսակ բռնակալութիւնների ամենասոսկալի մարմնաւորութիւնը իրագործել, բռնակալութիւն, զոր Ասիայի երկինք և երկիրը կարողացան տեսնել աշխարհի ծագումից ի վեր:

Երբ դիպլօմատիական Եւրօպան, այս ոյժերի և անծանօթ սկզբունքների վիթխարի կոյտին դէմն ելաւ, ոչ թէ միայն անկարող եղաւ ինչ տեսակ բան լինելը հասկնալու, բայց,—կարելի է անհաւատալի թւի,—մինչև այսօր իսկ, չը նայելով բազմադարեայ յարաբերութեանց, Եւրօպան տակաւին չէ կարողացած նրան յատուկ մի անուն տալու: Նրան անուանեց հետզհետէ Մեծ Թուրք, Կիսալուսին, Դիւան, Սուլթան, Բարձրագոյն Դուռ, Թիւրքիա, փադիշահ, Խալիֆ, Կայսր, և վերջապէս Դուռ:

Այս գաղափարների և այսքան միմեանց հակասող կարծիքների խառնակութեան մէջ արևմտեան դիպլօմատիան չը կարողացաւ հասկանալ իր հակառակորդին լեզուն, ամեն բան իրան համար հակառակ միտք, հանելուկ և խելագարութիւն էր: Եւ մինչև իսկ, երբ երկարատև կռիւներից յետոյ զէնքով յաղթանակը տարաւ, բայց և այնպէս քաղաքագիտական սկզբունքների տեսակէտից շարունակ յաղթվեց և ծաղրելի եղաւ:

Այսպէս է անցեալը: Գալով ներկային, չը գիտենք, թէ եւրօպական մեծ դիւանների իմաստութիւնը ինչ է պատրաստած մեր ժողովրդի երջանկութեան համար: Բայց ապագայի համար հաստատ գիտենք, որ այս դիւանները, իրանց մաշված քաղաքագիտութեամբ և իրանց բարենորոգումների ցնորքներով միայն պիտի յաջողին նոր շփոթութիւններ ստեղծելու և խուսափել կամեցած աղէտներն իսկ փութացնելու:

(Կը շարունակվի)

հայերի էր: Եկեղեցում հաւաքված էր միջակ հասարակութիւն. անհաղին մեծամասնութիւնը գերմանացիներ էին, փոքր մասը հայեր. ռուս հասարակութիւն չը կար: Առաջին անգամ զարմանալի էր թւում, որ գերմանական պաստորը՝ մոռանալով Բիսմարկի յայտնի խօսքերը, համարձակվում է յօգուտ հայերի կօնցէրտ տալ: Սակայն մեր պաստորը մարդասէր է, և հիւանդ Բիսմարկից չէ վախենում: Կօնցէրտը շատ լաւ անցաւ. մեր շնորհալի հայրենակիցները լաւ կատարեցին իրանց մասը (երգ, նուագ), իսկ ամենից հրաշալին լարական նուագածութիւնն էր՝ խմբական երգեցողութեամբ, որի ժամանակ ամբողջ հասարակութիւնը կարծես վերացել էր երկինք: Ահա ինչ է նշանակում եկեղեցական լաւ երգեցողութիւն, ոգեշունչ նուագածութիւն: Գերմանական պաստորից թող օրինակ առնեն այստեղի մի քանի բարձրաղաս հայերը, որոնք այնքան վախկոտ են, որ Բարձրագոյն հրամանը դուրս գալուց յետոյ էլ անխոհեմութիւն են համարում ուսանողների խնդիրը կատարել և գրականական երեկոյ կազմելու իրաւունք ստանալ, թէև գրականական երեկոյի մասնակցողները կը լինեն բոլոր նշանաւոր ռուս գրողները, որոնք անհամեմատ ուրախութեամբ են յանձն առնում մասնակցելու յօգուտ գաղթական հայերի տրուելիք երեկոյին, քան մեր բարձրաղաս հայերը, որոնց դեռ խելօք և խոհեմ էլ են ասում, ըստ նախաջրհեղեղեան դատողութեան:

Մ—Թ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

փետրվարի 22-ին

Մենք միշտ այն կարծիքի ենք եղել, որ օրէնքները, մանաւանդ եկեղեցական օրէնքները, ամենքի համար մի և նոյնն են, և այդ առանց որ և է բացառութեան: Սակայն դուրս է գալիս, որ այդ կարծիքը սխալ է և հարուստները կառավարվում են մի օրէնքով, իսկ չքաւորները ուրիշ, և ինչ որ առաջինների համար կարելի է, այն երկրորդների համար՝ անկարելի է: Դուք, ի հարկէ, այդ բանին չէք հաւատայ, չէինք հաւատում դրան և մենք. բայց տեսնելով մեր քահանաների արարքները, մենք եկանք այն եզրակացութեան, որ երկու անձանց համար, որոնք բռնում են հասարակական զանազան դիրքեր, կարող են տեղի ունենալ և երկու զանազան օրէնքներ: Դուք անշուշտ յիշում էք այն փաստը, երբ Թիֆլիսի քահանաները բոլոր ծիսակատարութեամբ թաղեցին մի հարուստ անձնասպանին, իսկ միւս՝ չքաւոր անձնասպանին այդպիսի թաղումից զրկեցին: «Մշակը» իր ժամանակին շեշտեց այդ ազեղ փաստը: Դրա նման մի բան տեղի ունեցաւ մօտ օրերս և Մօսկվայում: Այստեղի հայոց եկեղեցում կատարվեց յայտնի հարուստ Ջ-ի աղջկայ պսակադրութիւնը, որի ժամանակ սիրողների մի խումբ, համաձայն ցանկութեան յիշեալ հարուստ ընտանիքի, երգում էր զանազան եկեղեցական երգեր: Այդ վերջինի մէջ, ի հարկէ, ոչ մի յանցանք չը կայ, բայց բանը նրանումն է, որ այդ երգերը, համաձայն եկեղեցու կանոնների, չը պէտք է երգել պսակադրութեան ժամանակ, այլ ուրիշ պարագաներում: Ինչ ասել կուզէ, որ մեր քահանաները քաջ գիտէին, որ այդպիսի բան անել չէ կարելի և որ եկեղեցու տեսակէտից այդ յանցանք է: Բայց և այնպէս. նրանք այդ յանցանքը գործեցին, որովհետև հակառակ դէպքում աղաների խաթրին կը դիպչէին, իսկ այդ վերջին յանցանքը նրանք առաջինից բարձր դասեցին: Սրբութիւնը զոհ բերել փողաւորի կամայականութեանը—դա մի մեծ փաստ է, թէ ինչ աստիճան անպարտաճանաչ են մեր քահանաները: Մենք գուցէ այդքան չէինք վրդովվի, եթէ քաջ հաւատացած չը լինէինք, որ նկարագրածը տեղի ունեցաւ յանուն և ի փառս միլիօնի և տեղի չէր ունենայ, եթէ մի այդպիսի բան ուզէր անել մի ուրիշը, որը գրպանի փողը համարում է ոչ թէ միլիօններով, այլ կոպէկներով:

Սակայն մեր քահանաների կամայականութիւնը այդքանով միայն չէ բաւականանում. դրանք ընկերակցութեամբ մի քանի ինքնակոչ բարինների, այսպիսի բաներ էլ են անում. եկեղեցին մի քանի ժամով կապալով են տալիս: Մենք միշտ կարծել ենք, թէ եկեղեցին Աստուծու տունն է և երբ որ այդ տան դռները բաց են, ամեն ոք իրաւունք ունի ներս մտնել, լինի դա տուզ, թէ ամենավերջին աղքատը և մինչև անգամ կարծել ենք, որ վերջինները, համաձայն Քրիստոսի խօսքերին, այդ իրաւունքը աւելի ունեն: Բայց մեր քահանաներին ինչ Քրիստոսի խօսքերը, երբ տեղի ունեն աւելի ծանրակշիռ և ուշադրութեան արժանի խօսքեր, որոնք արտայայտում են տուզերի ցանկութիւնը: Եւ այդ պատճառով մեր քահանաները թոյլ էին տուել, որ յիշեալ պսակադրութեան երեկոյեան՝ եկեղեցի մտնէր միայն նա, ում որ աղան կը թոյլ տայ և այդ պատճառով եկեղեցու դրանը կանգնած էր մի ինչ որ ցիլինդրաւոր արարած (երևի եկեղեցու մի նոր դռնապան էր) ու ամեն մի լաւ հագնվածին ներս էր թողնում, իսկ փոքր ինչ վատ հագնվածին դիմում էր «вашъ билетъ» խօսքերով, պահանջելով մի ինչ որ տոմսակ, և ով որ տոմսակ չէր ներկայացնում, առաջն առնում էր, թէ առանց տոմսակի «нэлза» (հասկացէք «нельзя»), իսկ բոլորովին վատ հագնվածից տոմսակ էլ չէր պահանջում, այլ ուղղակի ասում էր «нэлза, уходи».

Ահա այդպիսի բարքեր են մեր Մօսկվայում: Նայելով այստեղի աղաներին ու ինքնակոչ բարիններին, որոնք միայն այստեղ են բարին դարձել, մարդ ակամայ մտածմունքի մէջ է ընկնում, թէ արդեօք այդ անձինք երբ և իցէ պէտք է մաքրվեն իրանց բարոյական ցեխից, թէ, թէկուզ հազար տարի էլ ապրեն մայրաքաղաքում, միշտ էլի այն անտաշ գեղացիները կը մնան: «Գեղացան քեղխուդա չի դառնայ»—ասում է թուրքը և միթէ ճիշդ է ասում:

Ավ. Կաճկաճեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մարտի 3-ին

Ստարօսելսկու սպանութեան գործը

Փետրվարի 27-ից սկսած Բագուի նահանգական դատարանում տեղի է ունենում երդուեալ հաւատարմատար Ս. Դ. Ստարօսելսկու սպանութեան գործի դատավարութիւնը: Եղելութիւնը իր բարդ և ուշադրութեան արժանի կողմերով մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում: Մուտքը տոմսակներով է: Դահլիճում ասեղ գցելու տեղ չէ մնում:

Սպանութեան գործի և շարժառիթների մէջ մեղադրվում են հետևեալները՝ զուբեցի Մաշադի Մահմէդ բէկ Մաշադի Ռուստամ-բէկ օղլի, Ախտի գիւղից՝ Ֆատտախ Ագիմ օղլի, Սարա գիւղից՝ Գիւլ Ղասում Քալբալայ Մասում օղլի, զուբեցի Քալբալայ Հիւսէյն Մաշադի Մէհտի օղլի, բագուեցի Մահմէդ Րիզա Մահմէդ Ջաֆար օղլի Բագիխանով, Զաբրատ գիւղից՝ Մանաֆ Քալբալայ Հաջըմ օղլի և Պիրշակի գիւղից՝ Իբրահիմ Ալաքպեար օղլի Մաշադիեվ: Մեղադրվողներին պաշտպանելու համար՝ նշանակված են փաստաբաններ դատարանի կողմից. տեղացի փաստաբաններից ոչ ոք չէ համաձայնվել և չէ յանձն առել մեղադրվողների կողմից փաստաբանել... Վերջիններիս կողմից հրաւիրել են և փաստաբանում են՝ Պետերբուրգի դատաստանական պալատի երդուեալ հաւատարմատար Միրօնով, նոյն շրջանի երդուեալ հաւատարմատար Կարաբչեվսկի և Կիեվի դատաստանական պալատի երդուեալ հաւատարմատար Կուպերնիկ: Կանչված են քառասունից աւելի վկաներ:

Գործի սկզբնական քննութիւնը ներկայացնում է սպանութեան հանգամանքների հետևեալ պատկերը... Սպանութիւնը տեղի ունեցաւ 1895 թ. Նոյեմբերի 15-ին: Դրանից մի քանի օր առաջ երկու թուրք գիշերները պտտում են եղել շարունակ Ստարօսելսկու բնակարանի մօտերքը. իսկ սպանութեան գիշերը շատերը նկատել են, որ կլուբի մուտքի առաջ մի թուրք անց ու դարձ է անում և ուշադրութեամբ դիտում ելումուտ անողներին: Նրա ձևերից պարզ երևում է եղել, որ նա գաղտագողի է պտտում և չէ ուզում դէմքը պարզ ցոյց տալ... Այդ թուրքը՝ երբ Ստարօսելսկու կլուբից դուրս գալը նկատում է, իսկոյն նստում է կառք, № 250—և սլանում: Պայմանաւորված տեղում իջնում է կառքից, կրկնակի վճարում և հեռանում: Այդ միջոցին կառապանի աչքումն են ընկնում երկու մարդ, որոնք հանդիպում են նրան: Այդ տեղի է ունենում գիշերվայ ժամի 1-ին: Մինչև այդ՝ հանգուցեալ Ստարօսելսկին առանձին կառքով, № 176, հասնում է տուն: Կառքից իջնելով՝ վճարում է կառապանին և պատրաստվում է դուռը բաղխել: Այդ միջոցին փողոցի անկիւնից դուրս են գալիս երկու հոգի և մօտենալով նրան՝ պարպում են մի քանի անգամ ատրճանակներ: Վիրաւորված և գլուխը կորցրած զոհը սկսում է փախչել, դրանք նրա ետևից, ապա կրկին վերադառնալով՝ ծածկվում են դէպի փողոցի անկիւնը, ուր գտնվում է մանրավաճառ Հիւսէյն Ղուլիի խանութը—և անհետանում: Հէնց նոյն գիշերը՝ քննութեան ժամանակ, քննիչի հարցին՝ թէ ովքեր էին սպանութեան փորձ անողները կամ թէ ում վրա է կասկած տանում—Ստարօսելսկի պատասխանում է. «Ովքեր էին ատրճանակ պարպողները—ես չը գիտեմ, չեմ ճանաչում, սակայն ես կասկած ունեմ երկու մարդու վրա, որ պէտք է սովորցրած լինեն. դրանք են՝ Զաբրատ գիւղի տանուտէր Մանաֆ Հաջըմ օղլին և Բագուի քաղաքային վարչութեան անդամ Բալա-բէկ Օրուջալիբէկօվ:» Հետևեալ օրը, ցերեկվայ ժամի 1-ին, սաստիկ տանջանքների մէջ Ստարօսելսկին աւանդում է հոգին...

Քննութիւնը արդէն ձևակերպել է մի ծրագրած դաւադրութիւն, որ տեղի է ունեցել 1895 թւի ամառը Բագիխանովի տանը՝ վերոյիշեալ սպանութիւնը գլուխ բերելու համար: Այդ մասին նոյն իսկ քանի մի անգամ զգուշացրել են հանգուցեալին. նա առանձին ուշադրութիւն թէև չէ դարձրել, բայց մի և նոյն ժամանակ միշտ ատրճանակ էր կրում զգուշութեան համար: Հէնց սպանութեան րօպէին ատրճանակը ձեռքին է ունեցել... Վրէժխնդրութեամբ գործված այդ սպանութեան շարժառիթները բղխում են գլխաւորապէս վիճելի հողային հարցերից: Ստարօսելսկու պաշտպանած և յօգուտ գանձարանի տարած հողերը դուր չեն գալիս մասնաւոր սեփականատէրերի—բէկերին. վերջինների կրած նիւթական մեծ վնասները ծագեցնում են վրէժխնդրութիւն և դաւադրութիւն հանգուցեալ փաստաբանի դէմ:

Փոքր ի շատէ կասկածի ենթարկվող մարդիկ այդ գործի վերաբերեալ՝ վաղուց ձերբակալված են. կան և այնպիսիները, որոնք և ձերբակալվել, և արձակվել են, առանձին յանցանք չունենալու համար: Չէ ձերբակալվել միմիայն քաղաքային վարչութեան անդամ Բալա-բէկ Օրուջալիբէկօվը: Բազմաթիւ վկաների մէկ մէկու հակասող, մէկ մէկու ջրող ցուցմունքները խճճելով, բարդացնելով գործի հանգամանքները, մի և նոյն ժամանակ շատ բնորոշ երևոյթներ են հանդէս բերում քննութեան եղանակի, ոստիկանական գործավարութեան և առհասարակ վկաների դէպի երդումը բռնած դիրքի մասին,—սակայն այդ մասին միւս անգամ:

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Մարտի 2-ին

Վերջապէս Ալէքսանդրօպօլի «Գորդեան հանգոյցը» լուծվեց: Մարտի 2-ին հաշտարար դատարանում տեղի ունեցաւ քաղաքագլխի և դումայի երկու անդամների ընտրութիւնը: Դեռ ընտրութիւնից մի քանի օր առաջ ձայնաւորների շրջանում սկսվել էր մի առանձին իրարանցում—խլրտում: Բոլորը բաժանվել էին երկու բանակի և իւրաքանչիւրն առանձնապէս աշխատում էր առաջ տանել իր թեկնածուի ընտրութիւնը: Մի կողմի թեկնածուն էր գեներալ Պրօսկուրեակօվ, իսկ միւս կողմինը՝ Գեղամ Տէր-Պետրոսեան... Վերջապէս հասաւ ընտրութեան օրը: Ժողովին մասնակցում էին 33 ձայնաւորներ (2-ը բացակայ էին): Քուէարկվեցին վերոյիշեալ երկու անձնաւորութիւնները, որոնցից գեներալ Պրօսկուրեակօվ ստացաւ 12 սպիտակ և 21 սև, իսկ Գեղամ Տէր-Տետրոսեանը՝ 21 սպիտակ և 12 սև քուէ: Այդպիսով ընտրված է վերջինը: Ապա ընտրվեցին ուպրավայի երկու անդամներ՝ Մովսէս բէկ Տէր-Սարգսեան (27 ձայնով, ընդդէմ 6-ի) և Գէորգ Տէր-Մարտիրոսեան (22 ձայնով ընդդէմ 11-ի): Բացի դրանցից քուէարկվեց նաև Յովհաննէս Կոստանեանց (կապալառու), որը ստացաւ 21 սպիտակ և 12 սև քուէ և հետևապէս չընտրված համարվեց: Աւելորդ չէ յիշել, որ ձայնաւորների նախընթաց ժողովում որոշվել էր վճարել քաղաքագլխին տարեկան 2400 ռուբլի ռոճիկ, ուպրավայի իւրաքանչիւր անդամին՝ 1000 ր., դումայի քարտուղարին 800 ր., և հաշուապահին 600 ր.: Մեզ մնում է ցանկալ, որ նորընտիր քաղաքագլուխը և ուպրավայի անդամները անաչառ ու եռանդուն գործունէութեամբ արդարացնեն իրանց ընտրողների յոյսերը և հերքեն հակառակորդների կարծիքները:

Քաղաքացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, փետրվարի 17-ին

«Մշակի» 10 և 11 համարներում տպված էր պ. Տ. Յովհաննիսեանցի մի թղթակցութիւնը Երևանի Բարեգործական ընկերութեան վարչութեան մասին: Թէ որքան արդարացի կամ անարդար էին նրա ասածները, այդ մեր նպատակից դուրս ենք համարում քննելու. մենք ուզում ենք կանգ առնել միայն նրա յօդուածի մի կէտի վրա, որը շօշափում է «Մշակի» թղթակիցների պատիւը: Պ. Յովհաննիսեանց խօսելով «Մշակի» 2-րդ համարի Երևանի թղթակցութեան վրա՝ աւելացնում է. «նա կարող է իբրև նմուշ ծառայել այն թղթակցութիւնների, որոնք վերջերս գրվում են այստեղից: Իբրև անկեղծ բարեկամ «Մշակի» ես չեմ ցանկանում, որ զանազան անձինք, ի չարը գործ դնելով «Մշակի» խմբագրութեան վստահութիւնը և օգտվելով այն հանգամանքից, որ խմբագրութիւնը հնարաւորութիւն չունի ստուգելու իր ստացած նամակների ճշգութիւնը, գործ դնեն «Մշակի» էջերը այնպիսի նպատակների համար, որոնք ոչ մի կապ չունեն հրապարակախօսութեան հետ և որոնց համար աւելի յարմար են անստորագիր մասնաւոր նամակներ, ինչպէս այդ լաւ հասկացել են մի քանի «խելացի պարոններ»: Այստեղից պարզ երևում է մի ակնարկութիւն դէպի «Մշակի» թղթակիցները՝ անօնիմ նամակների նկատմամբ:—Վերջին ժամանակներս մի քանի մարդիկ իրանց փեշակ են դարձրել անստորագիր նամակներ գրել սրան, նրան, նամակներ՝ լի անբարոյական դէպքերի նկարագրութեամբ և ակնարկներով. ի հարկէ, ժողովուրդը զայրացած է այդ դէպքերի պատճառով: Սակայն երբէք նոյն ժողովուրդը այդ չէ վերագրել «Մշակի» թղթակիցներին, մինչդեռ այժմ պ. Տ. Յովհաննիսեանը պարզ կերպով ակնարկում է այդ բանը և առանց քաշվելու Երևանից գրված թղթակցութիւնների հեղինակների համար աւելի յարմար է գտնում անստորագիր մասնաւոր նամակներ գրելը, քան թէ հրապարակախօսութիւնը: Որքան էլ պ. Յովհաննիսեանը զինված լինի «Մշակի» 2-րդ համարի թղթակցի դէմ, նա բարոյական ոչ մի իրաւունք չունի անստորագիր նամակները կապելու Երևանի բոլոր թղթակիցների անուան հետ: Միթէ «Մշակի» անկեղծ բարեկամը այդպէս է ծառայութիւն մատուցանում «Մշակին»: Մենք պ. Յովհաննիսեանի այդ վարմունքի դէմ բողոքում ենք, բողոքում ենք որպէս «Մշակի» թղթակից՝ մեր անուան հետ կապած անստորագիր նամակները, բողոքում ենք նաև այն միջոցի դէմ, որով պ. Յովհաննիսեանն կռւում է հակառակորդի դէմ: Հակառակորդին վիրաւորանք հասցնելու համար միջոցների մէջ խտրութիւն չը դնել, այդ գրականական էթիկայից հակառակ բան է, այդ օբսկուրանտների յատուկ զէնքն է և մենք երբէք չէինք ուզի, որ պ. Յովհաննիսեան կռուէր օբսկուրանտի զէնքով. այդ նրան պատիւ չէ բերում:

Ուստի բողոքելով պ. Յովհաննիսեանի այդ վարմունքի դէմ, նոյն խոր հրապարակով բացատրութիւն ենք պահանջում պարոնից, թէ ումն է ուզում ակնարկել՝ «Մշակի» բոլոր թղթակիցներին ընդհանուր անուան մէջ բերելով:

Ա.—Դօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից:

Փարիզից «Daily News»-ին գրում են հետևեալը. «Ֆրանսիական կառավարական շրջաններում զբաղված են այն հարցով թէ՝ երբ պէտք է Նախագահ Ֆօրը գնայ Պետերբուրգ ռուսաց կայսրին այցելութեան: Թէև այդպիսի նախադէպք (պրեցեդենտ) չը կայ, որ հանրապետութեան նախագահը ուրիշ երկրի պետին այցելութեան գնայ, սակայն ինքը Ֆօրը չատ զբաղված է այդ հարցով: Դրա համար նոյն իսկ նա սկսել է սովորել ռուսերէն և չաքաթական երեք դաս է վերցնում արևելեան լեզուների դպրոցի մի պրօֆեսօրից: Նա ուզում է մրցել Վիլհելմ կայսրի հետ նրա սեփական զէնքով և յոյս ունի Ձմերային պալատում ռուսաց կայսրի կենացը առաջարկել ռուսերէն»:

—

Ինչպէս երևում է, յոյներն էլ են սկսել գաղթել Թիւրքիայից: Ահա թէ ինչ է գրում այդ մասին Բաթումի մեր թղթակիցը. «Կրետական հարցը սարսափի մէջ է գցել և Թիւրքիայի յոյն ազգաբնակութիւնը: Նրանք երկիւղ կրելով, աւելի ճիշդն ասած, համոզված լինելով, որ կրետական հարցի այդչափ ձգձգվելը վաղ թէ ուշ իրանց էլ պէտք է հայերի վիճակին ենթարկի, սկսել են վաղօրօք իրանց գլխի ճարը տեսնել, այն է ամեն ինչ թողնել և փախչել օտար երկիրներ: Այսօր, մարտի 5-ին, իտալական շոգենաւով Տրապիզոնից և նրա շրջակայքից եկան Բաթում մօտ 80 ընտանիք: Պէտք է հաւատալ, որ սա վերջինը չի լինի և դեռ կը շարունակվի գաղթանական հոսանքը: Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև բարբարոս ցեղի հայերի գլխին կատարած գազանութիւնների պատկերը դեռ կենդանի կերպով նկարված է յոյն ժողովրդի աչքերի առաջ, իսկ գործերի ներկայ դրութիւնը կասկած չէ թողնում նրա սրտում, որ մի օր էլ ինքը կարող է այդպիսի մի գազանութեան նիւթ կազմել»:

—

Մեզ հաղորդում են հետևեալը. «Իշխան Անդրոնիկով ներկայացրել էր կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մի զեկուցում, որով առաջարկում էր բանալ գինեգործական շրջաններում պահեստներ ծծումբի, պղնձի արջասպի և զանազան գործիքների համար, որոնք գործ են ածվում խաղողի այգիները հիւանդութիւնից բժշկելու նպատակով: Ընկերութիւնը իր վերջին նիստում քննելով թէ այդ զեկուցումը և թէ այդ մասին յատուկ յանձնաժողովի կողմից յայտնված կարծիքը՝ հաւանութիւն տուեց առաջարկութեան և ընտրեց մի կենտրօնական մասնաժողով, որ պէտք է զբաղվի պահեստներ բանալու գործով, այլ և միջոցներ պէտք է ձեռք առնի օգնելու մեր այգեգործներին»:

—

Հինգշաբթի, մարտի 6-ին, Թիֆլիսի արտիստական ընկերութեան դահլիճում պիանիստ-կոմպօզիտոր Լուի Պաբստ, իր կնոջ՝ բարօնուհի Էնգէլգարդ Պաբստի մասնակցութեամբ տուեց իր առաջին կօնցէրտը: Եւրոպական լուրջ լրագիրները, ինչպէս օրինակ «Times», «Standard», «Daily Telégraph» մեծ գովասանքով են խօսում Պաբստի խաղի մասին և համարում են նրան մեր ժամանակի տաղանդաւոր կոմպօզիտորներից մէկը: Կօնցէրտի ծրագիրը բաւական հետաքրքրական էր և Պաբստ մեծ աջողութեամբ ու փոքրաթիւ հանդիսականների բուռն ծափահարութիւններով՝ կատարեց Շօպէնից, Բէտհօվէնից և Շումանից, ինչպէս և իր սեփական մի քանի կտորներ: Մանաւանդ գեղեցիկ էր ունգարական ռապսօդիան, որ նա և կինը կատարեցին երկու դաշնամուրի վրա:

—

«Крымъ» լրագիրը մեծ գովասանքով է խօսում Կարա-Մուրզայի կօնցէրտի մասին, որ նա տուեց Սիմֆերօպօլ քաղաքում: Ռուս լրագիրը, ի միջի այլոց, ասում է. «Իր արտիստական նշանակութեամբ պ. Կարա-Մուրզան՝ հայոց Սլավեանսկի է. միայն այն տարբերութեամբ,—և տարբերութիւնը յօգուտ Կարա-Մուրզայի է,—որ Սլավեանսկին ճանապարհորդում է պատրաստի խմբով, իսկ նրա հայ հետևողը իւրաքանչիւր քաղաքում սիրողներից նոր խմբեր է կազմում, սովորեցնում է նրանց հայոց ազգային երգեր, և այդպիսով արտիստական միութեան սերմեր է ցանում բաժան-բաժան եղած հայ համայնքների մէջ»:

—

Մեզ հաղորդում են, որ կոյր-երաժիշտ Նիկողայոս Տիգրանեան ուղևորում է Ռուսաստան և մտադիր է կօնցէրտներ տալ Ռոստով, Նոր-Նախիջեան և Մոսկվա քաղաքներում:

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, ուսուցիչներ Յակոբ Փօչարեանցի և Լևոն Մանուէլեանցի հեռանալուց յետոյ, նոր ուսուցիչներ չէ հրաւիրել, այլ նրանց դասերը բաժանել է եղած ուսուցիչների մէջ:

—

Լսում ենք, որ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովի նիստը նշանակված է մարտի 22-ին:

—

ՀԱԴՐՈՒԹ գիւղից մեզ գրում են. «Փետրվարի 21-ին սիրողների խումբը ներկայացում տուեց յօգուտ հայ գաղթականների: Ներկայացրին «Մաղօյի կտակը» և «Խէչօյի թուղը»: Ներկայացման գլխաւոր նպատակը՝ դրամական էր, դրա համար էլ ուշադրութիւն չէր դարձրված պիէսների ընտրութեան վրա: Ընդհանուր մուտք եղաւ 110 րուբլի, որ ասել է՝ խիստ աջող է: Հանդիսականները ուրախ տրամադրութեան տակ դուրս եկան թատրօնական դահլիճից: Անկարող ենք ուշադրութիւն չը դարձնել մի չատ տգեղ փաստի վրա, այն է, որ այդ երեկոյ թատրօնական դահլիճում բացակայում էին գիւղական «տուզերը»: Սիրողները մտադիր են Զատկի տօներին մի ներկայացում ևս աջողեցնել. յոյս կայ, որ այս անգամ պիէսի լաւ ընտրութիւն կը լինի: Ցանկանում ենք կատարեալ աջողութիւն»:

—

ԿԱՐՍԻՑ. Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Անցեալ փետրվարի 20-ին Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Կարսի ճիւղի օգտին՝ վարչութեան նախաձեռնութեամբ կայացած պարերեկոյթից ընդհանուր մուտք գոյացաւ 700 ր., իսկ ծախք եղաւ 198 ր. 15. զուտ արդիւնք մնաց 501 ր. 85 կոպէկ, որ գործադրվելու է տեղական ճիւղի ներկայ 1897 թւի նախահաշիւը լրացնելու համար: Վարչութիւնս պարտք է համարում հրապարակական շնորհակալութիւն մատուցանել այն յարգելի օրիորդներին, տիկիններին և պարոններին, որոնք իրանց ջանքը չը խնայեցին պարերեկոյթը ըստ ամենայնի հետաքրքիր դարձնելու հասարակութեան և օգտակար ըստ նիւթականին՝ տեղական ճիւղի համար»:

—

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են. «Անցեալ նամակով հաղորդել էինք, որ տեղական հասարակութիւնից ընտրված են վեց հաշւետեսներ, որոնք պէտք է քննեն աւանի երեք տարվայ ելքի և մուտքի հաշիւները: Այժմ այդ հաշւետեսներից մէկը—մի վրացի, շաբաթ գիշերը մտնում է մի ուրիշ հաշւետեսի՝ հայ վաճառականի խանութը, որի մօտ գտնվում էին աւանի գործերը, և խնդրում նրա գործակատարներին՝ ցոյց տալ իրան գործերը: Ստանալով բաւարարութիւն գործակատարներից, հաշւետեսը հեռանում է խանութից, սակայն այդ ժամանակ գործակատարները կասկած են տանում և յայտնում իրանց տիրոջ այդ մասին: Գալիս է տէրը և տեսնում, որ գործերից գողացված են՝ աւանապետի հարկ հաւաքողներին տուած, հասարակական փողեր ստանալու մասին, մի քանի անդորրագիրներ: Կազմվում է ոստիկանական արձանագրութիւնը, որի ժամանակ գող-հաշւետեսը խոստովանվում է, որ գողութիւնը կատարել է ինքը աւանապետի խնդիրքով և գողացած անդորրագիրները նրան յանձնել, որի համար նա խոստացել էր տալ նրան 10 րուբլի, բայց չէր տուել: Գողացված անդորրագրերը եղել են 226 ր. 50 կ. գումարի: Գործը յանձնված է դատաստանական քննիչին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ալաշկերտից ստացված նամակներից քաղում ենք հետևեալը. «Ձմեռը սաստիկ է թէ իր ցրտութեամբ և թէ ձիւնի չատութեամբ. բոլոր լեռներ և ձորեր մի արշին բարձրութեամբ ձիւնով ծածկված են. երթևեկութիւնը գեղէ գեղ դժուարութեամբ է կատարվում: Չը նայած այս հանգամանքին, գաղթականութեան հոսանքը, ստուար խմբերով, շարունակվում է դէպի ռուսական սահմանները: Նրանք, բացի քրդից և տաճկից, ոչ մի բանից չեն վախենում. բնութեան սառնամանիքներին զոհվելը նրանց համար հոգեկան մխիթարութիւն է: Սրանից երկու շաբաթ առաջ, Խաչլու գիւղից, մի քանի հարուստ ընտանիքներ, թողնելով իրանց երկրագործական բոլոր գործիքները և տան մէջ գտնված կահ-կարասիքը՝ փախչում են Ռուսաստան և մի գիշեր ձիւնի տակ մնալուց յետոյ՝ հազիւ կարողանում են իրանց ձգել Խաչի գիւղը (ռուսաց սահմանի վրա), որտեղ հայերի մօտ պատսպարան են գտնում: Այս երևոյթից դժուար չէ եզրակացնել, թէ գարունը, ձիւները հալվելուն պէս, գաղթականութեան ինչ հոսանքներ տեղի պիտի ունենան»:

—

Փոքր Ասիայի Մալաթիա քաղաքի մասին պրօֆեսօր Հարրիս գրում է հետևեալը. «Մալաթիան երկրային մի դրախտ էր և ժողովուրդը ապրում էր խաղաղ. մահմետականներ և քրիստոնեաներ փոխադարձ յարգում էին միմեանց: Բայց Իզզէդ Քեօսկի մի հեռագիր բորբոքեց ֆանատիկոսութեան կրակը և հազարաւոր քրիստոնեայ զոհեր գետին տապալվեցին: Ազդեցիկ բողոքական անձեր և երկուսից մինչև չորս հազար քրիստոնեաներ կոտորվեցին և նշանաւոր մարդկանց դիակները քաշքշվեցին բազարի միջով: Քրիստոնեաների 580 տուն աւերվեց, 600 աղջիկ և հարս տարվեցին հարեմներ և 50 մարդ այրվեցին մի եկեղեցում: Այժմ Մալաթիայում 500 այրի կին կայ և 1500 որբ: Կառավարութիւնը թոյլ չէ տալիս, որ դպրոցները բացվեն և մանուկները թափառում են փողոցներում: Սարսափը այնքան մեծ է, որ չատերը չեն համարձակվում իրանց տների վերանորոգութեան ձեռնարկել: Ճանապարհորդը սաստիկ զգացվում է, տեսնելով գազանային այս արարքները մի տեղում, որ բնութեան սքանչելի անկիւններից մէկն է: Մալաթիան, Հարրիսի ասելով, ամենագեղեցիկ քաղաքն է Փոքր-Ասիայում: Նա մի մեծ այգի է՝ լի մրգատու և բարդի ծառերով, ոռոգված բազմաթիւ ջրերով, որոնք իջնում են այստեղ մերձակայ լեռներից, իսկ տները ցրված են այգիների մէջ, թագնվել են ծառաստանների գրկում: Եւ այդ հրաչալի քաղաքը, բարբարոսների շնորհիւ, այժմ ներկայացնում է աւերակների մի կոյտ»:

—

«Eclair» լրագրի Աթէնքի թղթակիցը պատմում է իր խօսակցութիւնը յունաց մի մինիստրի հետ, որը, ի միջի այլոց, ասել է. «Եթէ մեզ գոհացում չը տան, մենք այնպիսի հրդեհ առաջ կը բերենք Բալկանեան թերակղզում, որ եւրօպական դիպլօմատիան զուր կաշխատի հանգցնել նրան: Մեր թագաւորը հասկացաւ մեր ազգային զգացումները, հակառակ դէպքում նա ստիպված կը լինէր հեռանալ: Ոչ մի արքայական կամ այլ իշխանութիւն չէ կարող կանգնեցնել ժողովրդական շարժումը»: Իսկ երեք պատգամաւորները յայտնել են, որ Յունաստանը կը նահանջի միայն այն ժամանակ, երբ Ակրօպօլը կը ռմբակոծվի:

—

«Times» լրագիրը հաղորդում է, որ եթէ մեծ պետութիւնները պաշարում յայտնեն, Յունաստանի ընդհարումը Թիւրքիայի հետ, Մակեդօնիայի մէջ, անխուսափելի է: Մեծ պետութիւնները խորհուրդ են տուել Բ. Դրան, պատերազմ յայտարարելու դէպքում, չարտաքսել յոյներին Թիւրքիայից: Սուլթանի յոյն հպատակները կը մտնեն Անգլիայի և Իտալիայի հովանաւորութեան տակ: Մեծ պետութիւնները զուր են այդ հոգսը քաշում. սուլթանը, ի հարկէ, չի արտաքսի յոյներին, այլ, երևի, կոտորել կը տայ հայերի նման:

—

Մինչ պետութիւնները պատրաստվում և արդէն սկսել են «խելքի բերել անխոհեմ» Յունաստանին, հելլենասիրական շարժումը Եւրոպայում աւելի և աւելի լայն ծաւալ է ստանում: Պարիզում յունասիրական ագիտացիան իր գագաթնակէտին է հասել: Բացի Ռօշֆօրից, Կասանեակից և Դրիւմօնից, ամեն օր մինիստրութեան և մեծ պետութիւնների վրա յարձակվում են լրագրական յօդուածներով Կլեմանսօ, Միլլէրան, Միլվուա և այլք: Միլվուա խորհուրդ է տալիս ֆրանսիացիներին թոյլ չը տալ, որ «անպատիւ լինի Ֆրանսիայի դրօշակը, որը մինչև այսօր եղել է անվախ և անարատ, որ նա չը ծառայի իբրև գործիք մի ազատ ազգ ստրկացնելու համար, որ նա չը հրաժարվի Նավարինից և ստրկանական ծառայութիւն չանի Վիլհելմ II կայսրին»: Անգլիայում նոյնպէս շարունակվում են յունասիրական միտինգները և Կէնտըրբէրիի արքեպիսկոպոսը ուղարկել է Աթէնքի Պրօկօպ միտրոպօլիտին համակրական հեռագիր: Բօլգար ուսանողները ուղարկեցին յոյն ուսանողների դաշնակցութեան մի հեռագիր, որով խոնարհվում են Յունաստանի «բարձր կուլտուրական գործի» առաջ և սրտագին համակրութիւն են արտայայտում մեծահոգի կրետական ժողովրդին և բոլոր նրանց, որոնք ոտքի են կանգնել նրա ազատութեան պաշտպանութեան համար: Յայտնի իտալացի ագիտատոր Չիպրիանի այս օրերս գնացել է Պիրէյ մի խմբով, որի մէջ մտել են մի ռուս և մի քանի ֆրանսիացի կամաւորներ:

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

—

Լօնտօն, մարտի 6-ին

Մարտ 8 երկուշաբթի օրուան անձկութեամբ կը սպասուի. յունական կառավարութիւնը իր պատասխանը մինչև այդ օրը պիտի տայ վեց պետութիւններուն, որոնք կը պահանջեն Հելլէն զօրքերուն և Հելլէն նաւատորմին Կրետէէն քաշուիլը: Այդ պատասխանը գրեթէ յայտնի է հիմակուց. Յունաստան պիտի չը խոնարհի: Ուրեմն ինչ պիտի ընեն պետութիւնները՝ թող պիտի տան որ Յունաստան և Թիւրքիա կռուի բռնուին: Թէ Անգլիոյ և թէ Եւրոպայի մամուլին ստուար մեծամասնութիւնը այն կարծիքի է թէ վեց պետութիւնները թող պիտի չը տան Յունաստանի եւրոպական խաղաղութիւնը վրդովելու առիթ հայթայթել: Եթէ միայն անգլիական մամուլը լսենք, կը համոզուինք թէ հակապատերազմական զգացումը չատ զօրաւոր է այս միջոցիս: Պահպանողական, հետևաբար կառավարական, թերթերը անխտիր կը հակառակին յունական քաղաքականութեան: Ազատական թերթերը ևս ետ չեն մնար պահպանողականներէն. միայն արմատականներն են որ կրակ կը ցանկեցնեն: Բայց «Թայմզ»-էն մինչև «Տէյլի Նիւզ» հակապատերազմական ոգին կը տիրէ: Այս վերջին թերթը խօսելով այս առտու արմատական միթինկի մը վրայ, որ երէկ գիշեր գումարուեցաւ Քուինս Հօլ, կակնարկէ եկեղեցականի մը պատերազմասէր քարոզութեանը և կըսէ. «Խաղաղասիրութիւնը Քրիստոսի պաշտօնէի մը առաջին պարտականութիւնն է, և Անգլիոյ ալ առաջին շահը»:

Ամեն թերթերուն գրածները ամփոփել չատ երկար կըլլայ. հակապատերազմականները ամէնքն ալ մի և նոյն ոգւով, մի և նոյն իմաստով կը խօսին: Քանի որ Կրետէն ինքնավարութիւն պիտի ստանայ և պիտի ազատի թիւրքական լուծէն, ուրեմն ինչ հարկ որ Յունաստան մէջ նետուի: Աւելորդ չեմ համարեր առաջ բերել քանի մը տող նախարարական «Սթանտարտ» թերթին այսօրուան խմբագրականէն: Խօսելով Յունաստանի ռազմական ծրագիրներուն վրա կըսէ. «Մակեդոնիոյ մէջ յառաջացում մը կը յիշատակուի իբր ռազմագիտական ամենապարզ գործողութիւններէն մէկը. և ցոյց կը տրուի թէ յունական մարտանաւերն ալ ուզածնին կրնան ընել Սելանիկին: Մենք նեղութիւն յանձն չենք առներ այս ծրագիրներուն թեխնիկական արժանիքները քննել: Օսմանեան պետութիւնը կը նմանի վիրաւոր վագրի մը, և մինչև իր մահուան հոգեվարքին մէջ իսկ կրնայ ահեղ վէրքեր տալ իր վրա յարձակողներուն: Ոչ ոք կուզէ կասկածել յոյներուն արիութեանը և զինուորական կարգապահութեանը վրա: Պատերազմի դաշտին վրա իրենց քաջութիւնը պիտի հաւասարի իրենց ազատասիրական տենչին ծայրայեղ արտայայտութեանը: Բայց վիրաւորիչ ակնարկութիւն մը պիտի չը համարուի ըսել թէ իրենց քաջութիւնը և տոկունութիւնը տակաւին փորձուած չէ, մինչդեռ թիւրք զինուորին դիմացկանութեանը վրա սքանչացեր են նաև անոնք, որ կատեն կառավարական այն դրութիւնը, որուն նախապաշարեալ սպասարկուն ու նեցուկն է այդ զինուորը: Մեծ պետութիւնները, ասիկայ կրնանք վերջացած խնդիր համարել, պիտի չը թոյլատրեն այս մահաբեր փորձառութիւնը ընելու: Անոնք պիտի փրկեն Յունաստանը, հակառակ իրեն, յանդգնութեանը պատիժներէն»:

—

Բայց առ այժմ պատերազմական պատրաստութիւնները առաջ կը մղեն ոչ միայն Յունաստանը և Թիւրքիան, այլ և եւրոպական բոլոր պետութիւնները, որոնց թիւին վրա կաւելնայ

Նաև Սպանիան ալ։ Ֆրանսա և Իտալիա նորանոր մարտանաւեր կը դրկեն Արևելեան ջուրերը։

Ու միայն Թիւրքիան է, որ ծիծաղելի կը դառնայ ծովուն վրայ։ Իր քսաներկու պատերազմանաւերէն հազիւ թէ երեքը, ան ալ շատ լաւատեսներուն կարծիքովը, կրնան Վոսփորի ջուրերէն հեռանալ։ Ու ըսել թէ Թիւրք պետութիւնը նաւարան ալ ունի, նաւային նախարարութիւն ալ ունի, ու նաւատորմին համար մեծաքանակ ծախքեր կընէ։

Սուլթան Ազիզ շատ հոգ տարաւ օսմանեան նաւատորմին, որ իր օրովը Եւրոպայի երրորդ կարգի ծովային զօրութիւններուն մէջ էր, իսկ այսօր կարգ չունի։ Օսմանեան նաւատորմը մեծապէս օգնեց սուլթան Ազիզի տապալումին. Վոսփորի մէջ, Տօլմապահչէի պալատին առջև շարուած, մարտանաւերը սպառնացան ռմբակոծել արքունի պալատ. Համիդ՝ սուլթան ըլլալէն ի վեր, ինչպէս որ ամեն պետական շահ իր անձնական շահերուն զոհեց, նոյնը ըրաւ նաև նաւատորմին համար ալ։ Ոսկեղջիւրի ջրերուն մէջ փտեցաւ, ո՛չ նաւազ, ո՛չ նաւային սպայ, ոչինչ առաջ եկաւ. երբեք մարտանաւերը քսան տարուան մէջ ռազմական փորձեր չըրին բաց ջուրերը. սուլթանը միշտ կը վախնար, որ անոնց ետ դարձին մահաբեր հարուած մը կրնայ տրուիլ իրեն։ Ծովային նախարար եղաւ Հասան փաշա մը, որ սուլթանին ստրուկն է, և արտօնուած է ամեն գողութիւն ընել։

Գալով բանակին, իրաւ է որ Թիւրք զինուորը քաջ է և դիմացկուն, բայց Թիւրք սպան մեղկ, անխելք և տգէտ ու վատ է ընդհանուր կերպով։

Թիւրքական բանակին շարժումը ոչ միայն արտաքին, այլ և ներքին թշնամիներու կողմէն ամենամեծ արգելքներու կրնայ հանդիպել։ Այսօր հեռագիր մը կը հաղորդէ թէ Մակեդոնիոյ մէջ ալպանիացիները զինընկեց ըրեր են րէտիֆներու (պահեստի զինուոր) քանի մը վաշտ։

Թիւրքիոյ դրամական վիճակն ալ յայտնի է. պատերազմական այս պատրաստութիւնները կը փճացնեն դրամի յետին մնացորդներն ալ։ Օսմանեան թուղթերը մեծ անկում կրեցին. Բանք Օթօմանի բաժնէթուղթերը, որոնք արդէն բաւական հարուած կրած էին մեր գործերէն, բայց դեռ վրայ դիրք ունէին, բ ր ի մ կընէին, ալ այսօր գլուխ գլխի են։ Այս թուղթերուն պատմութիւնը արդէն ընդարձակ թղթակցութեամբ մը գրած եմ, և հրատարակուեցաւ վերջերս «Մշակի» մէջ։ Սեղանաւորական սէնտիքաները, որոնք կը բռնէին օսմանեան թուղթերը և շահադիւրութիւններ կընէին, շատ վնասեցին մեր դատին, յուսալով որ այս միջոցով կարող կըլլան իրենց գործերը կարգադրել, բայց իրենց շահամոլ յիմարութեանց մէջ շատ կարճատես եղան, մինչև հիմա ամէն բան կորսնցուցին։ Մեր կրած կորուստներուն մէջ, քիչ մը սըրտի պաշտուք ունենալ է, ականատես ըլլալով այդ սեղանաւորական մեծամեծ կորուստներուն։

Պօլիս ալ դրամական տեսակէտով շատ ծանր վիճակի մէջ է։ Պայրամին առթիւ միայն կէս ամսական տրուած է։ Գիտէք թէ Թիւրք պաշտօնեաները տարին քանի մը անգամ միայն ամսական կառնեն. պարտաւորիչ է Ռամազանին, Պայրամին, Ղուրպան Պայրամին ամսականներու վճարումը. սուլթանը ինչ կընէ չընէր՝ այդ օրերուն ամսական մը կը վճարէ. այս տարի անկարող գտնուեր է ամբողջ ամսական մը վճարել։ «Սթանտարտ»ի թղթակիցը երէկ կը հեռագրէր Պոլսէն, թէ չէ եղած երբեք ատեն մը, որ ստորին դասակարգերը այս աստիճան դառնալէս կատղած ըլլան։ Բայց շատ կարելի է որ այս զգացումէն բան մը առաջ չի գայ. իրենց համբերութիւնը ու ճակատագրի հաւատքը անսպառելի է։»

Մեր համբերութիւնը սակայն անսպառելի չէ, զօրութիւննիս միայն սպառած է, այս թէ ոչ ինչպէս կարելի էր տանել այն լուրերուն, որոնք հայ աշխարհէն ամէն օր կը հասնին։ Հետևեալ լուրը, զոր «Սթանդարտ» կը հրատարակէ, իր անհեղ պարզութեանը մէջ ճշգրիտ գաղափար մը կրնայ տալ հայ ժողովրդին քաշածներուն։ «Անվճար մնացած տուրքերը գանձելու համար գործադրուած ճնշումը այնքան սաստիկ է, որ հարկահաւաքները կը խլեն սովատանջ ժողովրդին ձեռքէն այն հացը, զոր խնամատար ընկերութիւնները կը բաշխեն. այդ հացը իբր տուրքի տեղ վար կը դրուի։ Այս մասին դեսպանատուները գանգատներ եղան։»

Մինչ Հայաստան այս վիճակին մէջ է, տարին Անգլիոյ ազատական կուսակցութիւնը երբեմն երբեմն դեռ ակար ձայն մը կը լսեցնէ մեզի համար։ Քուինս Հօլի երէկ գիշերուան ազատական միտինգին մէջ բաւական խօսուեցաւ մեր վրայ. Նախագահ պ. Ռըսէլ այս առթիւ նորէն պաշտպանեց այն գաղափարը թէ հայկական խնդրին անյաջող ելք ունենալուն պատճառն այն է, որ կուսակցական խնդիր չըրին զայն Անգլիոյ մէջ։ «Ոչ-կուսակցական ձեռնարկը կործանեց հայկական յուզումը Անգլիոյ մէջ», ըսաւ նախագահը։ Այս գիշեր հոս ներկայ գտնուող հայերը թող գիտնան, շարունակեց պ. Ռըսէլ, թէ ինչ որ ալ ընեն Մեծ-Բրիտանիոյ նախարարներն ու խորհրդարանը, ազատական կուսակցութիւնը պիտի չը մոռնայ զիրենք ու իրենց իրաւունքները։»

Պ. Ռըսէլ յունուար ամսուն մէջ հրատարակեց «Քօնթէմփորէրի Ռըվիւ»-ին մէջ յօդուած մը, որով կը պաշտպանէր այն գաղափարը թէ հայկական խնդիրը պէտք է կուսակցական խնդիր ընել, որպէս զի յաջողութիւն գտնէ։ Այս գաղափարը գործնական կերպով ալ իրականացնելու հետամուտ է։

***

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

Հայկական կաճառ

(Բարեգործական ընկերութեան ընդհ. ժողով)

Տրիբունները լի են։ Պարլամէնտի կօրրիդօրներում նկատվում է մեծ կենդանութիւն. պատգամաւորները, խմբերի բաժանված, տաք-տաք վիճում են։ Ահա հնչեց նախագահական զանգը. մինիստրական նստարանները բռնված են. Հանոտօ յուզված է երևում,—նա ուշադրութեամբ դիտում է ծայրահեղ-ձախակողմեանների կողմը։ Ահա Կլեմանսօ, Ժօրէս, ահա Բրիսսօն, Միլերան, Գօբլէ... Ժօրէս շուտ շուտ շուռ է գալիս դէպի մամուլի տրիբունը. այնտեղ նստած է Ռօշֆօր։ Դիպլօմատիական լօժաները բռնել են դեսպանները...

Դուք, ընթերցող, չէք տեսել ֆրանսիական պարլամէնտը։ Ափսոս։ Բայց ոչինչ. «պարլամէնտը» տեսնելու համար հարկաւոր էլ չէ մինչև Պարիզ գնալ. նեղութիւն կրեցէք քայլել մինչև Թիֆլիսի դումայի դահլիճը և ահա ձեր առաջ կը բացվի մինիատիւր-պարլամէնտը, կամ, եթէ կուզէք, պարլամէնտական ծաղրանկարը...

Ահա ժամը 8-ն է։ Հնչեց նախագահական զանգը։ Փառաւոր ամբիօնի վրայ բազմած է Բրիսսօն, թէ՛, բժ. Նաւասարդեան, որ այդ աթոռի վրայ աւելի է սիրահարված, քան Համիդ իր գահի վրայ։ Աջ կողմում տեղաւորված է, ինչպէս դիցաբանական գրողները Արամազդի կողքին, խորհրդի քարտուղար Առաքելեան, ձախ կողմում՝ ընդհանուր ժողովի քարտուղար Մալխասեան։ Երկու քարտուղարների և նախագահի դէմքերի մէջ զուգահեռական գծերի փոխարէն՝ կազմված է մի-մի եռանկիւնի. մէկն իր դէմքը թեքել է մի քիչ դէպի աջ, միւսը դէպի ձախ։ Երևի նախագահի հետ մի «բանակ» չեն կազմում... Իսկ նախագահը, աչքերը յառած տարածութեան մէջ՝ որոնում է բարեկամներին, բայց այդ անիծեալները չը կան ու չը կան...

Անդամները հաւաքվում են։ Ահա մի կողմ տեղաւորված են ծայրահեղ-ձախակողմեանները (մշակականներ), որոնք ոչնչից գոհ չեն, ոչ գրադարանից, ոչ տառապեալներին յատկացրած գումարից, ոչ նախագահից, ոչ խորհրդի նախահաշւից, ոչ անդամների թւից, և որոնց դրօշակի վրա գրած է՝ «մշտական օպօզիցիա»։

Ահա միւս կողմը մի ահա... գին կուսակցութիւն (մուրճական), բաղկացած մի անդամից՝ Աւետիք Արասխանեանից (բազմած այնտեղ, որտեղ սովորաբար բազմում է ձայնաւոր Շահ-Ազիզ...)։ Նա զինված «հեղինակաւոր» անդամների տեղեկութիւններով, եկել է ռմբակոծելու խորհրդի քարտուղարին. աջ և ձախ որոնում է իր միակ բարեկամին՝ «Հողային վարկի» հեղինակին, որպէս զի իր խրախուսիչ ճառից յետոյ՝ լսէ նրա կարծիքը, բայց նա էլ, ո՜վ երկինք, շատ հեռու է բազմել և կարծէք ուզում է ասել՝ «Ես պատասխանատու չեմ...»։

Ահա երրորդ կողմը մի այլ կուսակցութիւն, «կազմակերպեալ յամենայն հերձուածողաց և յարտաքսելոց», որի պրօգրամը մի գաղտնի ժողովում ձևակերպված է այսպէս. «Եթէ Լէօ կասի՝ Միխայլօվսկի լաւ գրող է, գոչել՝ վատ է, վատ է. եթէ Մալումեան կառաջարկի՝ օգնել գաղթականներին, գոռալ՝ չէ, չէ, չէ. եթէ ծայրահեղ-ձախակողմեանները կը կանգնեն, մենք նստենք. եթէ նրանք կը նստեն՝ մենք կանգնենք»։ Դրանց կենտրոնում նստած է մի պարոն, որի դէմքին եթէ նայէք՝ ճանաչելիս էլ չը լինէք, իսկոյն ճակատին հրեղէն տառերով կը կարդաք՝ «Տիգրան Նազարեան»...

Ահա վերջապէս կենտրօնը, խորհրդի անդամներով. մէջտեղ Սամսոն Յարութիւնեանց, որ սրում է իր զէնքերը՝ ի պաշտօնէ խորհուրդը պաշտպանելու համար։ «Կանանց հարցը» ունի միայն երկու ներկայացուցիչ, իսկ կղերական կուսակցութիւնը միայն մի պատգամաւոր...

Իսկ տրիբունը... օ՜հ անթիւ գլուխների անտառ է դա, պատանեկան աղնիւ ոգևորութեան ժողովածու է, ուր «կապոյտ շապիկի» կողքին փայլում է ամենավերջին տարազի (ոչ ըստ «Տարազի») փետուրաւոր գլխարկը, ուր մի ահագին բազմութիւն սրատրոփ հետևում է «հայկական կաճառի» հանրաշահ և ազգօգուտ որոշումներին, հայկազեան Գամբէտաների սրտամաշ ճառերին... Եւ ամէն մի ճառախօս, բեմբասացութիւնը աւարտելուց յետոյ՝ յաղթական հայեացքը ուղղում է դէպի տրիբունը, կարծէք հարցնելու՝ «Ամերիկան գտայ, այնպէս չէ՞...»

Նորից հնչեց զանգը։

Նախագահ. «Կը կարդացվի անցեալ ժողովի արձանագրութիւնը»։

Արասխանեան (թեթև շշուկ։) Ես խօսք եմ խնդրում (ծիծաղ).

Նախագահ. Ինչու՞ մասին, արձանագրութեան մասին. բայց թոյլ տուէք նախ կարդալ...

Արասխանեան (ծիծաղ). Այդ մի և նոյն է, ես ուզում եմ խօսել... իմ կարծիքով, և պէտք է աւելացնեմ հեղինակաւոր անդամների կարծիքով, մենք այստեղ հաւաքվել ենք խօսելու (ծիծաղ)... Ժողովը պէտք է տարածվէ (ծիծաղ) այն բոլոր հարցերի մասին, որոնք խորհրդից բերված են մեր քննադատութեան առաջ։ Ես մինչև անգամ այդ առիթով յղվում եմ (ծիծաղ) կանոնադրութեան վրա... (բարձրաձայն ծիծաղ)։

Հնչում է զանգը։ Արձանագրութիւն, խօսակցութիւն, նորից զանգ, նորից հռետորներ...

Նախագահ. Պարոններ. տեսէք ժամը 12-ն է. ախր որ ես ասում էի քիչ խօսենք, կարևոր բաների մասին խօսենք, այ դրա համար էի ասում...

Նիստը փակված է։ Արասխանեան, սանդուղտներով իջնելիս, իր միակ բարեկամին. «Գիտես, բաւականին յաջող էր, բաւականին խօսեցինք։ Եւ լաւ եղաւ, որ չը վերջացաւ, ուրեմն մենք դեռ կարող ենք այդ հարցերի մասին տարածվել և արտայայտվել միւս կիրակի էլ։ Եւ «Մուրճի» համար բաւական նիւթ կը լինի։»

Սանդուղտների վերևից լսվեց հօմերական ծիծաղ...

(Կը շարունակվի երբ և իցէ)

ԳՐՈՂ.

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԿՐԵՏԷ

ԿԱՆԷՅԱ, 3 մարտի։ Կրետէի ափերի մօտ գտնվող «Սիսօյ Վելիկի» զրահակրի վրա, Սուդայի ծովածոցում, թնդանօթաձգութեան ժամանակ շատ վնասվեց աշտարակի վերնայարկը, որի ժամանակ սպանվեցին գլխաւոր ինժեներ—մէխանիկի օգնական Դէրեագին, 14 նաւաստիներ և երեք նաւաստիներ թեթև կերպով վիրաւորված են։ Ծանր վիրաւորվածներից լէյտենանտ Պէչչուրօվ և երկու նաւաստիներ վախճանվեցին։

ԼՕՆԴՕՆ, 5 մարտի։ Սօլսբիւրի հրաժարվեց ընդունել այն պատգամաւորութիւնը, որը ուղարկել էր նրա մօտ այն ժողովը, որ կիրակի կայացել էր Տրաֆալգար-սկվէրում՝ կրետական հարցի առիթով իր որոշումը հաղորդելու համար։

ԼՕՆԴՕՆ, 5 մարտի։ Լրագիրները հաղորդում են, որ Մալտայում գտնվող գէյցլանդեան գնդի 1600 զինուորներ հրաման ստացան գնալ Կրետէ, իսկ Մալտայի մօտ կանգնած նաւատորմը անյապաղ կերթայ կրետական նաւատորմը ուժեղացնելու համար։

Լուրեր են պտտում, որ Անգլիան դիտաւորութիւն ունի առաջարկել Թիւրքիային եգիպտական զօրքերի մասնակցութիւնը Յունաստանի դէմ պատերազմ մղելու համար։

Կ. ՊՕԼԻՍ, 6 մարտի։ Ռուսաց դեսպանը, Բ. Դրան ուղղած խնդիրքի պատճառով, թոյլտուութիւն ստացաւ 600 զինուորներից բաղկացած զօրք անցկացնել, որը պէտք է Կրետէն պաշարի։

ՀՌՕՄ, 6 մարտի։ Կանէյից ստացված տեղեկութիւնների համեմատ, Կրետէի ընդհանուր պաշարումը դեռ ևս չէ յայտարարված այն պատճառով, որ միայն երէկ երեկոյեան, սենատի քուէարկութիւնից յետոյ, ֆրանսիական ծովակալը պատշաճաւոր հրամանագիր ստացաւ, որ համապատասխան է մնացած պետութիւնների ստացած հրամանագրին։ Հեռագիրն ուղարկելու ժամանակ սպասվում էր պաշարման յայտարարութիւնը։ Նաւատորմերի հրամանատարների ըստացած հրահանգները գործադրութեան մի որոշ ազատութիւն են տալիս նրանց։ Պետութիւնները տեղեկացրին նաւատորմերի հրամանատարներին, որ նրանց խնդիրքով Կրետէ կուղարկվեն 600 ծովային զինուորներ։

ԼՕՆԴՕՆ, 6 մարտի։ Կալկաթայից հեռագրում են. «Կապեան կօլօնիայում գտնվող բրիտանական զօրքերը հրաման ստացան պատրաստ լինել յամենայն դէպս»։

ՏՈՒԼՕՆ, 6 մարտի։ Ծովային պրեֆէկտը ծովային մինիստրից հեռագիր ստացաւ, որի մէջ հաղորդվում է սենատի յայտնած վստահութեան մասին մինիստրութեանը և հրամանագրում է Արևելք ուղարկել կրէյսեր՝ ծովային հետևակ զօրքով՝ Կանէյան գրաւելու համար։ Կրէյսերի հեռանալու ժամանակ բազմաթիւ ամբոխը աղաղակում էր «Կեցցէ Ռուսաստան»։ «Կեցցէ Ֆրանսիա» և երաժշտութիւնը ածում էր ազգային օրհներգներ։

ԼՕՆԴՕՆ, 6 մարտի։ Մալտայից Կրետէ ուղարկած զօրքերը կը գտնվեն գնդապետ Չէրմսայդի հրամանատարութեան տակ։ Կրետէ ուղարկված եւրօպական զինուորական զօրաբաժինները պարտաւոր են, «Րէյտէրի գործակալութեան» տեղեկութիւնների համեմատ, գլխաւորապէս կարգ պահպանել այն քաղաքներում, որոնց հարևանութեամբ կը գտնվեն, որովհետև այդքան փոքր զօրքերը չեն կարող ուրիշ գործունէութիւն ունենալ։ Պաշարման նպատակն է արգելել յունաց զօրքերի ափ իջնելը և կենսական մթերքներ դատարկելը։

ԿԷՕԼՆ, 7 մարտի։ «Köln. Zeitung»-ին հաղորդում են Սիտիից. «Ապստամբները կրակ էին անում օտար պետութիւնների օֆիցէրների վրա. այդ պատճառով ֆրանսիական, իտալական և անգլիական նաւերի հրամանատարները վճռեցին հինգշաբթի ռմբակոծել Եալիսկալի գիւղը երեք հարուածներով։ Ապստամբներին յայտարարված է այդ մասին։ Քաղաքը գրաւված է օտար զօրքերով. հանգիստ է»։

ԿԱՆԷՅԱ, 7 մարտի։ Կրետէի պաշարումը կըսկսվի կիրակի առաւօտեան։ Մեծ պետութիւնների և չէզոք պետութիւնների նաւերը իրաւունք կունենան ապրանքը դատարկել, եթէ այդ ապրանքները յունական զօրքերի կամ կղզու ներսի համար չեն լինի բերված։ Նաւատորմերի հրամանատարները առաջարկեցին Յունաստանին հեռացնել նաւերը։ Մերժման դէպքում, նաւերը մարտի 9-ին ուժով կը հեռացնվեն։

Կ. ՊՕԼԻՍ, 7 մարտի։ Աւստրիական դեսպանութիւնը Բ. Դրան ուշադրութիւնը դարձրեց այն բռնութեան վրա, որ մահմետականները գործ են դնում քրիստոնեաների դէմ Ուսկիւբում։

Կ. ՊՕԼԻՍ, 7 մարտի։ Լօնդօնի հայոց կօմիտէտը խնդրեց հայոց պատրիարքին, դրդել Բ. Դրան կատարելու րէֆօրմների մասին տուած խոստումը, որովհետև, հակառակ դէպքում, բանը կը հասնի նոր գործողութիւնների։

ՎԻԷՆՆԱ, 7 մարտի։ Աւստրիական զինուորական նաւը, Դիա հրւանդանի մօտ, խուզարկեց մի նաւակ, որը, կարծում էին, բեռնաւորված է զէնքերով և մթերքներով։ Ապստամբները սկսեցին կրակ անել աւստրիական նաւի վրա։ Վերջինը նոյն եղանակով պատասխանեց։ Նաւակը բոլորովին ծակվեց և ջրի տակ գնաց. ապստամբները հալածված են։ Աւստրիական նաւի վրա ոչ ոք չէ վիրաւորված։

—

ԿԱՅԻՐԷ, 5 մարտի։ Հաւատացնում են, որ մահդին կը զիջի Բերբէրը դրամական վարձատրութեան համար, իսկ նրան կը տրվի Դարֆօր և Կօրդօֆան։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 6 մարտի։ Հավաննայից հաղորդում են, որ դինամիտը օդն է թռցրել երկաթուղիական գնացքը սպանիական զօրքերով, երբ անցնում էր Պինար-դէլ-Րիօ նահանգով։ Սպանված են և վիրաւորված 250 մարդիկ։

ԲԱԳՈՒ, 6 մարտի։ Նահանգական դատարանը, երդուեալ հաւատարմատար Ստարօսէլսկիի սպանութեան գործի քննութիւնից յետոյ, հետևեալ վճիռը կայացրեց. դատապարտել Մահմէդ Բակիխանովին ցմահ տաժանակիր աշխատանքների, Մէշէդի Մահմէդ և Ֆատտախ Հաքիմ-օղլիին՝ 20 տարով տաժանակիր աշխատանքներին, իսկ մեղադրվող Մանաֆին, Իբրահիմ բէկին, Գիւլ և Քէրբալայ-Հուսէյնին արդարացնել։

—

Մարտի 1-ին երկրորդ փոխառութեան տոմսերի տիրաժ գցելու ժամանակ, 500 ական րուբլի ընկան հետևեալ տոմսերի վրա.

Տոմսերի համարները	Սէրիաների համարները
1:	328, 2,563, 3,240, 5,808, 8,806, 10,495, 11,958, 13,969, 17,633, 17,763.
2:	4,452, 6,403, 7,986, 19,338,
3:	854, 6,572, 7,548.
4:	3,253, 8,581, 10,819, 11,627, 11,635, 12,701.
5:	557, 640, 2,207, 12,829, 15,851,
6:	3,478, 6,453, 8,219, 9,923, 11,117, 14,175.
7:	469, 6,530, 7,054, 8,383, 8,710, 17,377.
8:	1,311, 4,989, 7,470, 14,119, 16,971, 16,996, 17,130, 17,585, 19,427.
9:	10,100, 10,422, 10,761, 12,365, 12,365, 19,223.
10:	266, 6,758, 11,300.
11:	2,656, 4,899, 5,178, 6,002, 9,185, 19,179.
12:	2,665, 7,067, 10,593, 11,705, 12,499.
13:	4,674, 7,980, 11,447, 15,025, 18,479, 18,663.
14:	399, 5,820, 9,950, 27,220.
15:	5,845, 8,895, 11,240.
16:	539, 905, 2,774, 3,847, 5,783, 8,145, 10,199, 12,032, 13,118, 13,393, 17,241, 17378.
17:	3,067, 5,651, 9,585, 11,523, 13,387, 14,231, 17,473.
18:	678, 985, 10,730, 11,802, 18,616.
19:	2,810, 6,637, 9,805, 13,028, 13,037, 14,372, 17,937, 18,284.

20: 563, 2,721, 3,335, 3,964, 14,512.
21: 2,627, 9,060.
22: 9,822, 12,624.
23: 2,744, 7,845, 10,999, 15,305.
24: 10,884, 14,605, 16,995.
25: 8,615, 8,903, 10,757, 10,797, 11,340, 19,547.
26: 1,437, 8,258, 11,050, 13,910, 17,894, 18,824.
27: 1,591, 6,354, 7,754, 8,075, 8,572, 9,252, 12,951, 18,049, 18,762, 19,735.
28: 13,229.
29: 5,946, 9,238, 15,314, 15,754.
30: 5,961, 10,004, 11,792, 15,264, 16,597, 17,871, 18,890.
31: 11,614, 12,058, 16,189.
32: 8,316, 8,431, 11,292.
33: 3,508, 8,817, 13,471, 14,260, 15,442, 16,622.
34: 6,656, 14,992.
35: 4,266, 4,780, 6,590, 11,796, 12,681, 18,904.
36: 49, 1,358, 3,617, 6,061, 7,861, 8,320, 8,499, 10,310, 14,514, 18,382, 18,867.
37: 4,298, 6,359, 14,184.
38: 1,570, 2,236, 11,416, 14,777.
39: 4,627, 9,152, 10,677, 14081, 18,785, 19,065.
40: 8,195, 8,919, 11,454, 12,068, 15,267.
41: 4,731, 5,263, 15,269.
42: 286, 11,424, 12,503, 12,977, 14,029, 17,594.
43: 4,588, 9,714.
44: 3,914, 10,363, 11,707, 11,912, 16,802, 18,291.
45: 8,491, 10,145, 10,215, 12,264.
46: 308, 7,677, 10,459, 11,081, 14,029.
47: 6,064, 6,507, 8,297, 11,417, 13,460, 14,385, 14,468, 15,068, 17,741, 18,027.
48: 1842, 2,175, 2,457, 2,994, 6,818.
49: 7,042, 13,522.
50: 457, 2,317, 4,952, 8,968, 11,273,

Տիրաժ ընկած տոմսերը

13,664, 7,130, 9,963, 17,215, 18,211, 6,089, 3,644, 12,059, 8,270, 10,923, 18,224, 13,429, 3,683, 2,389, 1,746, 16,710, 8,151, 14,245, 8,155, 2,297, 2,996, 12,170, 15,048, 16,424, 18,659, 13,746, 5,992, 15,177, 12,737, 15,329, 14,677, 4,273, 10,690, 12,421, 6,525, 4,015, 1,361, 1,682, 16,480, 17,895, 11,994, 12,181, 3,704, 7,072, 3,693, 3,617, 3,634, 6,535, 9,027, 18,899, 13,192, 16,963, 19,393, 16,123, 9,198, 18,542, 5,023, 11,166, 10,444, 6,183, 16,595, 18,132, 16,369, 9,567, 16,467, 6,240, 6,548, 15,719, 11,213, 6,310, 15,744, 4,267, 4,739, 795, 17,105, 13,485, 1,737, 13,232, 18,019, 1,931, 1,941, 480, 9,933, 10,126, 8,922, 12,976, 79, 18,200, 19,465, 5,217, 6,541, 4,519, 6,663, 8,138, 18,372, 8,464, 7,934, 5,459, 2,219, 772, 19,758, 7,321, 16,282, 8,183, 4,233, 14,356, 11,586, 13,269, 16,978, 8,885, 19,418, 1,858, 4,632, 19,037, 10,170, 15,409.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բաթ. դուրս է գալիս	9 Ժ. 40 ր. առ.	11 Ժ. 20 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	9 „ 55 „ եր.	12 „ 25 „ ցեր.
Թիֆլ. դուրս է գալիս	10 „ 50 „ „	1 „ 10 „ „
Բագու հասնում է	4 „ 49 „ „	7 „ 30 „ առ.
Բագուից դուրս է գալիս	2 Ժ. 30 ր. ցեր.	11 Ժ. 5 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	8 „ 21 „ առ.	5 „ 50 „ եր.
Թիֆլ. դուրս է գալիս	9 „ 30 „ „	6 „ 50 „ „
Բաթում հասնում է	9 „ 45 „ եր.	8 „ 15 „ առ.

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հինգ հոգու համար		
Թիֆլիսից դուրս է գալիս	7 Ժ. առ.	9 Ժամ. առ.
Գիշերում է	Մլեթում	Պասանաուր
Վլադիկավկազ հասնում է	6 Ժ. երեկ.	8 Ժ. երեկ.
Վեց հոգու համար (չեն գիշերում)		
Թիֆլիսից դուրս է գալ	9 Ժ. 30 ր. առ.	7 Ժ. 50 ր.,
Վլադիկավկազ հասնում է	12 „ —ցերեկ.	8 երեկ., „

ԲԺՇԿԱԿԱՆ - ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ
ԲԺՇԿԱՊԵՏ ՓՐԱՆՑԻՈՒՍԻ
Վէլիամինովսկայա փող. տուն № 4, Դումայի հանդէպ: Բաց է 2—3 ժամ:
ՄԱՍՍԱԺԻ ԴԱՍԵՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ
(№ 10) 6—10

Կ. ՊՈԼՍԵՑԻ
ԱՆԱԳԱԳՈՐԾ (*կլէկչի*) և ՊՂՆՁԱԳՈՐԾ *յայտարարում են, որ ընդունում են պատուէրներ էժան գնով, երաշխաւոր են շինածի ամրութեան և տևողական լինելու համար: Դիմել 5-րդ քաղաքամաս, Ցիցիանովի փողոց, տուն Խօջայեանցի,* № 4:
1—3

ԱՐՄԱՆ ՌՕԶՕ
Մ Կ Ն Ի Կ Ը
վօդէվիլ մէկ արար. փոխադր. Ա. ՎՐՈՅՐԻ.
Գ Ի Ն Ը 20 կ.
Թիֆլիսում վաճառվում է կենտրօնական գրավաճառանոցում: Օտարաքաղաքացիները կամ գումարով գնողները պէտք է դիմեն Թիֆլիս 1-ին Գօնչարնայա փողոց. № 12. *դերասան* Ա. *Վրոյրին:*
1—3

Վ Ա Ր Ժ Ո Ւ Հ Ի
կամենում է դասեր ունենալ ռուսերէն, ֆրանսերէն և մուզիկա, եօթից մինչև տասը տարեկան աղջկերանց հետ: Պարապում է ժամերով: Համաձայն է ընդունել և իր տանը:— Հասցէն՝ Барятинская улица, № 10:
(№ 26) 3—6



ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ԹԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ
(*Տնային գործածութեան համար*)
ՍՄԲԱԿԱՅԻՆ ՁԷԹ, *սմբակները պնդացնելու, կակղացնելու և սնացնելու համար: Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման: ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.:*
ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, *կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսումից, չինում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, չուխլէմների, սանձերի, ձիի սարքի, չէմօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար: ԳԻՆԸ՝ 75 կոպ.:*
ԹԱՄԲԱՅԻՆ ՍԱՊՈՆ (*յատկապէս սպիտակ կաշուց չինած թամբերի համար*): *Գործ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և զանազան գոյների կաշի մաքրելու: ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.:*
Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում:
Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:
(№ 22) 27—50

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՌՈԲԵՐՏԱԿԱՆ
„ROBERT COLLEGE“
ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՒԱՐՏԸ *ուսուցանում է* ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ *ամէրիկական նոր սիստէմով. դասատուութիւնը ռուսերէն կամ ֆրանսերէն լեզուով: Պայմանների մասին հարցնել Թիֆլիսի Աղնուականութեան քարվանսարայում,* № 127 *գրասենեակում:*
(№ 22) 4—6

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ԹԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ
(*Տնային կարիքների համար*)
ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՅԾԱԿ»: *Մի քանի րոպէում նորոգում է հին, անշնորհ, խաղխղած կահկարասիքը, պիանինօ, րօյալներ, հայելիի և ուրիշ շրջանակներ, արկղիկներ, տփիկներ և այլ յղկած փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեանը: ԳԻՆԸ՝ 1 ր.:*
ՏՕԿԱՅԵԱՆ ԲԱԼԶԱՄ—*միջոց ոտքի կոշտերից (մօզօլներ), ելունդներից և կաշուէ այլ ուռոյցքներից: «Տօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոշտերը, ելունդները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ցաւ չէ պատճառում: ԳԻՆԸ՝ 60 կ.:*
Ծախվում է դեղարարական խանութներում:
Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղարարական ապրանքների կովկաս. ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:
25—50 (22 №)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
խորհուրդը յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամների, որ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ *շարունակութիւնը լինելու է կիրակի, մարտի 9-ին, երեկոյեան ժամը* $7^1/_2$-*ին, Դումայի դահլիճում:*
(№ 27) 2—2

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ
(*Սերգիեվսկի փողոց, տուն Ալիխանեանի,* № 16)
Ստացվում են մայրաքաղաքների և տեղական նշանաւոր ռուսերէն և հայերէն ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ: *Ունի հարուստ բաժին* ԿՈՎԿԱՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ *վերաբերեալ և հետզհետէ հարստանում է բելլետրիստիկայի վերաբերեալ ռուս և հայ հեղինակութիւններով:* ԲԱՑ Է *առաւօտեան 9—2 ժամ, երեկոյեան 5—8 ժամը, իսկ տօն և կիրակի օրերին՝ 9—12 ժամ:* ՎՃԱՐԸ՝ *տարեկան 4 ր., ամսական 40 կոպէկ: Մուտքը 2 կ.: Աշակերտները վճարում են կէսը:*
10—10

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, *չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից.*
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, մարտ ամսի 19/31 ին ԱՆԱՏՕԼԻ *շոգենաւը, նաւապետ* ԲԻԱՆԿԻ *և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից*
Պ ա կ ա ս գ ն ե ր ո վ: Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—*պ. Վիկտոր դ'Արնօյին, Նաբէրէժնայա:* ԹԻՖԼԻՍՈՒՄ—*պ.* Օ. Գ. *Բարեկենդանեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա:* ԲԱԳՈՒ—*պ.* Ս. *Դիլդարեանին, Կօլիւբեակինսկայա հրապարակ:* ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—*պ. Մելխիոր Հերշինրօդերին:*
(№ 16) 13—20

Վ ա ճ ա ռ վ ո ւ մ է
ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ
Ա Մ Ո Ւ Ս Ն Ա Կ Ա Ն Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր
Գ Ի Ն Ը 1 Ր Ո Ւ Բ Լ Ի
Ծախվում է ԹԻՖԼԻՍԻ *կենտրօնական գրավաճառանոցում,* ԲԱԳՈՒ, «*Արօր*» *տպարանում:*
(№ 21) 6—6

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

ա) Յայտնում է, որ հանգուցեալ տիկին Նունէ Ղամբարեանցի I մրցանակին 400 ր., համաձայն որոշման առանձին մասնաժողովի, արժանացաւ պ. Առաքել Մնացականեան՝ «Ուսթի և ուտիերէնի» հեղինակը, 1894 *թ. Գէորգեան ճեմարանի ընթացաւարտ:*

բ) Յայտարարում է ի գիտութիւն, որոց կը վերաբերի բարձրատիճան Ստեփան Ղամբարեանցի ամուսին հանգուցեալ Նունէ Ղամբարեանցի հետևեալ նուիրատուութեան և նրա պայմանների մասին, որոնք արած են 28 օգոստոսի 1891 *ամի:*

«Ցանկանալով յորդորել Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրոցի և Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի սաներին աւարտելուց յետոյ շարունակելու գործել գրականական ասպարիզում և միևնոյն ժամանակ վարձատրել նրանց գրական գիտնական առաջին աշխատութիւնները Կովկասի և Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և ազգագրութեան ուսումնասիրութեան վերաբերեալ, յարգելի Հոգաբարձութիւնից խնդրում եմ ընդունել յօգուտ Ներսիսեան հոգևոր դպրոցի նուէր ինձնից երեք հազար ռուբլի 4% արժեթղթերով և գործադրել հետևեալ կերպով: 1) Իմ նուէրը պիտի լինի անձեռնմխելի մայր գումար. այդ գումարից գոյանալիք %%-ից, որ չորս տարուց կը հանի մօտ չորս հարիւր ռուբլի և երկրորդը հարիւր ռուբլի, որպէս վարձատրութիւն ամենաընտիր աշխատութիւնների գրված հայկական լեզուով Կովկասի և Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և ազգագրութեան մասին: 2) Մրցանակաբաշխութեան մասնակցելու թոյլատրվում է Ներսիսեան հոգևոր դպրոցի և ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի այն բոլոր աւարտած սաներին, որոնք իրանց ուսումն աւարտել են մրցանակաբաշխութեան օրից ոչ աւելի առաջ քան հինգ տարի: 3) Մրցանակները տրվում են առանձին մասնախմբից, բաղկացած հինգ հոգուց, որոնց ընտրում է Ներսիսեան հոգևոր դպրանոցի ուսուցչական ընդհանուր ժողովը իր միջից և մասնաւոր անձերից: Որպէս ցանկութիւն, յայտնում եմ կարծիքս, որ գոնէ երկու անդամները միշտ ընտրուին մասնաւոր հեղինակաւոր անձերից»:

Ցիշեալ պայմանների հիման վրա, երկրորդ մրցանակաբաշխութիւնը հանգուցեալ Ղամբարեանցի լինելու է 1899 *ամի սեպտեմբերին հետևեալ կերպիւ:*

1) *Հեղինակութիւնները պէտք է ուղարկվեն Ներսիսեան դպրոցի Հոգաբարձութեանը, ոչ ուշ քան 1-ն սեպտեմբերի* 1899 *ամի:*

2) *Հեղինակութիւնները պէտք է ունենան խորագիր, իսկ հեղինակի անունը պէտք է նշանակած լինի փակ ծրարի մէջ, նոյն խորագրի տակ, որպիսի ծրարը բացվելու է միայն մրցանակաբաշխութեան որոշումից յետոյ:*

3) *Մրցանակատուութեան հարցը որոշելուց յետոյ, հեղինակութիւնները կարելի է յետ ստանալ կամ անձամբ, կամ հաւատարմաթղթով:*

4) *Մրցանակի արժանացած շարադրութիւնների, նրանց հեղինակների և տարած պրեմիայի քանակութեան մասին, կը հրատարակվի լրագիրներում:*

(№ 25) 3—3

ԱՌԱՆՑ ԿՈՂՄՆԱԿԻ ՈՅԺԻ ԵՒ ԾԽՍԵՐԻ
ԼՆՄԻՋԵԼԻ
ՍԻՖՕՆ-ԷԼԵՎԱՏՕՐԸ
Բարձրացնում է ջուրը 35—70 և աւելի արշին
Ջ Ր Ե Լ Ո Ւ
Դաշտեր, այգիներ, պարտէզներ և այլն:
Ջ Ո Ւ Ր Է Տ Ա Լ Ի Ս
Քաղաքներին, կալուածներին, ամարանոցներին, գիւղերին:
Բ Ա Ր Ձ Ր Ա Ց Ն Ո Ւ Մ Է Ջ Ո Ւ Ր Ը
Ջրաղացները, սարերը և ամեն տեղ, ուր ջրի կարիք կը լինի:
(№ 136) 11—15
Ռուսերէն լեզուով բրոշիւրները
ՈՒՂԱՐԿՈՒՈՒՄ ԷՆ ՁՐԻ
Դիմել Լեւոն Խան-Աղեանցին
Тифлисъ, Мадеровская, собст. домъ.

Ջ Ր Հ Ա Ն Ն Ե Ր
ԿԵՆՏՐՕՆԱԽՈՅՍ „ԼԷՏԷՍՏԻ“ *և ուրիշներ, խորհուրդ է տալիս գնել*
ԵՐՐԱԼՕՎ և ԱԼԻԽԱՆՕՎ *ինժեներների*
ԳՈՐԾԱՏՈՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ: *Պրէյսկուրանտը ձրի է ուղարկվում:* (№ 23) 4—5

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Марта 1897 г.
Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул.' д. кав